

## ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում  
1914 թ. հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը  
Տետր 11: 1916 թ. մարտի 13-ից մինչև ապրիլի 21-ը\*

**Բանալի բառեր** – Թովմաս Նազարբեկյան, Բիթլիս, Մուշ,  
Գենջ, Մ. Սիլիկյան, գնդապետ Օբրագցով, ակրոֆորիա:

Առաջին աշխարհամարտի ավարտի 100-ամյակի կապակցությամբ՝ 2018 թ. վերջերից նախաձեռնեցինք գեներալ-լեյտենանտ Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյանի անտիպ հուշերի հայերեն թարգմանությունը, իսկ 2019 թվականի սկզբներից՝ մաս առ մաս տպագրությունը «Վէմ» հանդեսի էջերում: Այժմ Թովմաս Նազարբեկյանի հուշերի 11-րդ տետրի հրատարակմամբ հիմնականում ավարտված ենք համարում այդ աշխատանքը:

Գեներալի հուշերի՝ 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. հուլիսն ընդգրկող հատվածը ժամանակին ռուսերեն բնագրով հրատարակվել է ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի խմբագրությամբ «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրում<sup>2</sup>: Ուստի անտիպ է մնացել միայն 1916 թ. ապրիլից մինչև 1917 թ. նոյեմբերն ընդգրկող մասը, որն այդպես էլ մեզ չհաջողվեց գտնել Հայաստանի ազգային արխիվում:

Գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերի 11-րդ տետրում ներկայացվում են 1916 թ. մարտին Կովկասյան ռազմաճակատում ծավալված մարտական գործողությունները, երբ նրա գլխավորած 2-րդ հրաձգային դիվիզիան լուրջ բախումներ ունեցավ Գալիպոլիի շրջանից Արևմտյան Հայաստան տեղափոխված թուրքական 5-րդ հետևակային դիվիզիայի և քրդական զինված կազմավորումների հետ: Ջորավարը ցավով փաստում է, որ 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Վ. դե Վիտտը այդ գործողությունները պլանավորելիս հաշվի չէր առել լեռնային տեղանքի առանձ-

1 Չնայած վերնագրում նշվում է ապրիլի 26-ը, բայց 11-րդ տետրի շարադրանքն ավարտվում է 1916 թ. ապրիլի 2-ի իրադարձությունների ներկայացմամբ:

\* Ընդունվել է տպագրության 14.08. 2021:

2 Տես Армянский корпус против турецких войск (ноябрь 1917 г.-июль 1918 г.). Воспоминания генерала Ф. И. Назарбекова. Составитель: Г. М. Шатирян, специалист Архивного Управления, редактор: Г. А. Аветисян, член-корреспондент АН РА, профессор, ВАА, N 3, 1992, էջ 34-153:

նահատկությունները, պահեստագործի ցածր մարտական պատրաստվածությունը, թիկունքի անապահով լինելը և մատակարարման գրեթե բացակայությունը: Մինչդեռ, սկսած 1916 թ. մարտի կեսերից, հակառակորդն իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր Բիթլիսի ուղղությամբ՝ նպատակ ունենալով գրավելու այդ քաղաքը: Վերլուծելով ստացված զեկուցագրերը՝ Թ. Նազարբեկյանը դիմում է 4-րդ բանակային կորպուսի հրամանատարին՝ խնդրելով իրեն օգնության ուղարկել պահեստագործում գտնվող 5-րդ և 6-րդ հրաձգային գնդերը, սակայն որևէ պատասխան չի ստանում: Հետախուզությունն անհաջողակ էր, որ թշնամին շարունակում է լրացուցիչ ուժեր կուտակել, և հատկապես ակտիվ են գործում քրդերը: Գեներալի հրամանով վերջիններիս դեմ կազմակերպվում են պատժիչ գործողություններ, սակայն դրանք որևէ էական արդյունք չեն տալիս: Ռուսների հեռանալուց հետո քրդերը վերսկսում են հարձակումները: Ուստի գեներալ Թ. Նազարբեկյանը կրկին դիմում է կորպուսի հրամանատարին՝ օգնության խնդրանքով, սակայն հստակ մերժում է ստանում: Որոշ ժամանակ անց պարզվում է, որ Վ. դե Վիտտը ցանկանում էր Բիթլիսի շրջանում օղակել թուրք-քրդական ուժերին, ուստի, համալրում չուղարկելով, դրդում էր հակառակորդին շարունակելու առաջխաղացումը՝ չհասկանալով, որ այդպես լուրջ վտանգի է ենթարկում Բիթլիսը պաշտպանող ուժերին: Բայց կորպուսի հրամանատարն իր մտահոգման մասին նույնիսկ տեղյակ չէր պահել Թ. Նազարբեկյանին:

Ստեղծված իրավիճակում Թ. Նազարբեկյանը ստիպված է լինում Բիթլիսին օգնության ուղարկել իր վերջին պահեստագործ՝ երեք հրաձգային գումարտակներ, որով թուլացնում է Մուշի պաշտպանությունը: Բարեբախտաբար, թշնամու ողջ ուշադրությունը կենտրոնացված էր Բիթլիսի վրա, և նա որևէ գործողություն չձեռնարկեց Մուշը վերագրավելու համար: Գեներալի ուղարկած գումարտակները վճռական դեր խաղացին, թուրք-քրդական ուժերը գլխովին ջախջախվեցին ու հետ շարտվեցին ելման դիրքեր: Կովկասյան բանակի թիկունքի պետ, գեներալ Ե. Մալովսկին ևս փաստում է, որ մի քանի օր տևած ծանր մարտերից հետո թուրքական դիվիզիան հետ մղվեց<sup>3</sup>:

Գեներալ Թ. Նազարբեկյանի կիսատ մնացած հուշերը լրացնելու համար վերջում ներկայացնենք ՀՀ ազգային արխիվում պահպանվող նրա դաշտային գրքույկում առկա հետևյալ տեղեկությունները:

Այսպես՝ ապրիլի 15-ին Վան-Ադրբեջանյան ջոկատի հրամանատար, գեներալ Ֆ. Չերնոգուբովին ուղղված գրության մեջ Թ. Նազարբեկյանը

3 Ст. Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте 1914-1917 гг. Стратегический очерк, Париж, 1933, էջ 336:

տեղեկացնում էր, որ Համազասպի դրուժինան անընդմեջ մասնակցել է մարտական գործողություններին ու զգալի կորուստներ է ունեցել, ուստի անհրաժեշտ էր համարում, որ հայ կամավորները շարունակեն մնալ իր հրամանատարության ներքո<sup>4</sup>:

Կորպուսի հրամանատար, գեներալ Վ. դե Վիտտին ուղղված ապրիլի 16-ի զեկուցագրում Թ. Նազարբեկյանը դժգոհում էր, որ հայ կամավորական խմբերի լուծարման հետևանքով կրճատվել է վաշտերի մարտակազմը<sup>5</sup>:

Ապրիլի 21-ին կորպուսի համբարակային ծառայության պետին ուղղված գրության մեջ Թ. Նազարբեկյանը խնդրում էր շտապ ուղարկել ցանկացած տեսակի անասնակեր, քանի որ ձիերը զրկված էին կերից<sup>6</sup>:

Ապրիլի 21-ին գեներալ Ֆ. Չերնոզուբովին ուղղված հեռագրում խնդրում էր տեղեկացնել՝ Հայկական 1-ին դրուժինայի հրամանատարական կազմը՝ Անդրանիկը, Սմբատը և ուրիշներ, Դիմանի ճակատամարտի համար ներկայացվել են արդյոք բարձրագույն պարգևների<sup>7</sup>: Ճակատամարտից հետո անցել էր մեկ տարի, սակայն նրանք չէին ստացել իրենց հասանելիք մարտական խաչերը: Եվ դա հասկանալի էր. հայկական դրուժինաները լուծարվում էին, և այլևս կարիք չկար որևէ կերպ խրախուսելու հրամանատարներին ու կամավորականներին իրենց կատարած սխրանքների համար:

Ապրիլի 28-ին Քաղաքների միության լիազոր Ռոստոմին ուղղված գրության մեջ գեներալը խնդրում էր աջակցել Բիթլիսում գտնվող հայ և թուրք բնակիչներին պարենով ապահովելու և բժշկական օգնություն ցույց տալու համար<sup>8</sup>: Ինչպես հետևում է գեներալի մյուս հեռագրերից, Բիթլիսում գտնվող զորքը նույնպես պարենի մեծ կարիք ուներ<sup>9</sup>:

Հետաքրքրական է հատկապես Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող գյուղատնտես Ա. Աթանասյանի հետ Թ. Նազարբեկյանի գրագրությունը: Այսպես՝ հունիսի 4-ի նամակում Ա. Աթանասյանը տեղեկացնում էր գորավարին Մուշում և շրջակա գյուղերում գտնվող հայերի ծանր վիճակի մասին: Նա խնդրում էր Թ. Նազարբեկյանի միջնորդությունը՝ հայերի վիճակը բարելավելու համար, և առաջարկում էր նրանց մի մասին ուղարկել Մանազկերտ<sup>10</sup>:

4 Հայ աստվածագյ ին սրիվի, ֆոնդ 45, ցուցակ 1, գործ 23, թերթ 3:

5 Տե՛ս նույն տեղում, թ. 6:

6 Տե՛ս նույն տեղում, թ. 13:

7 Տե՛ս նույն տեղում, թ. 17:

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 23, թ. 26:

9 Տե՛ս նույն տեղում, թ. 34:

10 Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 9-10:

Մայիսի 29-ին Թ. Նազարբեկյանը, տեղեկանալով, որ Մուշում տեղակայված Կովկասյան 5-րդ հրաձգային գնդի հրամանատար, փոխգնդապետ Բրեշլեի կամ նրա սպաների մոտ կան հայկական մագաղաթյա ձեռագրեր, պահանջում էր անմիջապես հանձնել ում որ հարկն է, և զեկուցել կատարման մասին<sup>11</sup>:

Գեներալ Թովմաս Նազարբեկյանի հուշերի հայերեն թարգմանությունը տպագրվում է առաջին անգամ և առանց կրճատումների: Մեր միջամտությունները ներկայացվում են ուղղագրի փակագծերում: Բնագիրը պահվում է Հայաստանի ազգային արխիվում:

Իր կյանքի մայրամուտին՝ 1926–1928 թվականներին, նյութական ծանր պայմաններում Թ. Նազարբեկյանի շարադրած ծավալուն ու խիստ արժեքավոր հուշագրական աշխատանքի տպագրության ավարտը համընկնում է նրա մահվան 90-րդ տարելիցին: Ուստի հույս ենք հայտնում, որ եթե ոչ մենք, ապա գոնե պատմագետների նոր սերունդը մինչև գեներալի մահվան 100-րդ տարելիցը կհայտնաբերի նաև նրա արժեքավոր հուշերի վերջին՝ 1916 թ. ապրիլից մինչև 1917 թ. նոյեմբերն ընդգրկող մասը և կհանձնի ընթերցողի դատին:

**Ռուբեն Օ. Սահակյան**

*Պատմ. գիտ. դոկտոր*

## Տեսք 11

25 հոկտեմբերի 1929 թ.  
ք. Թիֆլիս

Գնդապետ Դուգովի ջոկատը [մարտի] 13-ի լույս [մարտի] 14-ի գիշերը նահանջեց Շեյխ-Ջում, քանի որ [ջոկատի] թևերը շարունակ շրջառվում էին հակառակորդի կողմից, ինչին դրուժինսիկները չէին դիմանում: [Մարտի] 14-ի առավոտյան ջոկատը կրկին անցավ հարձակման, սակայն շատ չանցած Վալանի կողմից շրջառվեց մոտ 1000 թուրքերի կողմից, որոնք ասկյարների երեք վաշտերով հարձակվում էին Շեյխ-Ջումի ուղղությամբ, իսկ մոտ մեկ գումարտակ՝ Բադեի: Դուգովն իր թնդանոթներով, գնդացիներով, հետևակի փոքր մասով և կազակների հետ նահանջեց Բադե: Դրուժինսիկների մեծ մասն անկանոն անցավ Յուզելի աջ ափը և սկսեց նահանջել դեպի Օլյակ: Թուրքերը, նրանց հետապնդելով, հասան Շեյխ-Ջում: Ջոկատի հրամանատարը Բիթլիսից օգնության էր ուղարկել 8-րդ գնդի հետախույզների

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 47, 49:

ստորաբաժանումը: Չուխուր-Նորշենից հրաձիգների երկու վաշտերին՝ երեք գնդացիներով, և Հայկական դրուժինային Կոտնիից հրամայված էր անհապաղ գնալ Բիթլիս:

Փոխգնդապետ Եգուպովն ամբողջ օրը ձակատամարտ էր տալիս: Նույնիսկ փորձեց կիրառել հրետանին, բայց ապարդյուն: Ջոկատին, չնայած թեժ մարտին, չհաջողվեց ոչ մի քայլ առաջանալ: Գնդապետ Դուգովին հրամայված էր մնալ Բադեում և այնտեղ տեղափոխել դրուժինիկներին:

Կարպի դիմաց գտնվող Թերալիկ գյուղում մեր հետախույզները հայտնաբերեցին, որ 300 քրդեր այդ գյուղում զբաղեցնում են խրամատները: Գնդապետ Դուգովի ջոկատը չդիմացավ թվապես և որակապես գերակշռող հակառակորդի ճնշմանը: Դրուժինիկները խուճապի մատնվեցին և սկսեցին անկանոն նահանջել՝ չենթարկվելով հրամանատարությանը:

Ողջ ընթացքում կորպուսի հրամանատարը կշտամբում էր գնդապետ Օբրազցովին հարձակման ուղարկված ջոկատների թույլ գործողությունների համար և նույնիսկ դիտողություն արեց Օբրազցովին, Եգուպովին ու Դուգովին:

Պետք է նշել, որ փոխգնդապետ Եգուպովը Դիլմանի ձակատամարտի համար արժանացել էր Գեորգիևյան 4-րդ աստիճանի շքանշանի և իմ դիվիզիայում հայտնի էր իր մարտական արժանիքներով: Դուգովին ես չէի ձանաչում:

Հավանաբար կորպուսի հրամանատարը հաշվի չէր առել Բիթլիսի տեղանքը և Դարդանելից նոր ժամանած թուրքական զորքերի արժանիքները: Հետագայում նա ինքը տեսավ և հասկացավ, սակայն վիրավորանքն արդեն հասցվել էր: Ի՞նչ կարելի էր պահանջել գնդապետ Դուգովից և իր դրուժինիկներից, որոնք մեծահասակ մարդիկ էին և բացարձակապես սովոր չէին գործել այդչափ լեռնային տեղանքում, ինչպիսին Բիթլիսն էր ու նրա շրջակայքը: Նրանք կարող էին լավ գործել միայն քրդերի դեմ:

Հայտնի չէր, թե որտեղ էր գտնվում ինքը՝ գնդապետ Դուգովը, իր գորամասերի անկանոն նահանջից հետո: Նրա համհարզը զեկուցեց, որ Դուգովը թեքվել է դեպի Ելնով<sup>12</sup>, բայց Ելնովում, որտեղ կար հրաձիգների դասակ, Դուգովի ջոկատից ոչ մի մարդ չէր ժամանել: Առավոտյան ժամը 5-ին՝ հենց այն պահին, երբ գնդապետ Դուգովի համհարզը նոր էր միայն սկսել զեկուցել կապիտան Գոտովցևին (ջոկատի շտաբի պետին) իրավիճակի մասին, հեռախոսակապը նորից ընդհատվեց, և անձամբ գնդապետ Դուգովից որևէ տեղեկություն չկար:

Երեկոյան ժամը 5-ին Բիթլիսի ջոկատի շտաբի պետը Բիթլիսից Ելնովով Դուգովին օգնության ուղարկեց հետախույզների ստորաբաժանում և հրաձիգների վաշտ կազակների դասակի հետ: Վաշտի հրամանատարին հաղորդվել էր կորպուսի հրամանատարի կարգադրությունը նույն օրը՝ գիշերը հասնել և պաշտպանել Դուգովի թնդանոթները, սակայն, հաշվի առնելով լեռնային ու դժվարամատչելի տեղանքը, հրամանը հազիվ թե հնարավոր էր կատարել:

Փոխգնդապետ Եգուպովի ջոկատը, որն առավոտյան ժամը 5-ից մինչև մութը ընկնելը մարտ էր մղում մոտ 800 թուրքերի դեմ հրետանու օգնությամբ, վերջապես

12 Թերևս Եզնով, Բիթլիսի գյուղերից:

կարողացավ թուրքերին դուրս մղել դիրքերից, որոնք անմիջապես գրավեցին անավել դժվարամատչելի բարձունքներ, և թևանցումները հնարավոր չէին, քանի որ տեղանքն անմատչելի էր: Թուրքերը զարմանալի համառություն ցուցաբերեցին: Մեր հրետանու կրակն արդյունավետ չէր: Որպես արդյունք՝ Եգուպովը մնաց հին տեղում և պետք է երկրորդ գիշերն անցակացներ դիրքերում: Եգուպովի ջոկատի թևերում և թիկունքում թուրքերի գործողությունները չէին դադարում, և հավանաբար հակառակորդի ուժերն օրեցօր ավելանում էին: Կարպից ուղարկված մեր հետախույզները Տերալիկի մոտ հանդիպեցին քրդերի դիմադրությանը, որտեղից էլ քրդերի ճնշման տակ նահանջեցին դեպի Կարպ: Հակառակորդը 300-350 հոգի էր: Դրուժինիկների վաշտը և հետախույզների ստորաբաժանումը մինչև մութն ընկնելը զսպում էին քրդերին, որոնք գտնվում էին Կարպից մեկ վերստի վրա: Երեկոյան ժամը 9-ին Կարպ օգնության ուղարկվեց գնդացիներով զինված դրուժինիկների վաշտ, որին հրամայված էր ամուր պահել Կարպը:

Կարպից 10 վերստ հյուսիս-արևմուտք գտնվող Շելյսանից եկած հայ փախստականը վկայեց, որ լսել է, որ մարտի 13-ին Խաշտից<sup>13</sup> 6 վերստ հարավ գտնվող Դատվան են ժամանել 4 գումարտակ՝ 4 թնդանոթներով և 4 գնդացիներով: Նրանց համար մաքրում են ճանապարհները: Խոսք կա, որ նրանք ցանկանում են Կարպով հարձակվել Բիթլիսի վրա:

Կոտնի գյուղի մոտ Հայկական 1-ին դրուժինան ցերեկվա ժամը 2-ից մինչև մութն ընկնելը փոխհրաձգություն էր վարում 300-ից ավելի քրդերի հետ: Քրդերը համառորեն դիմագրավում էին: Հայկական դրուժինային կարգադրվել էր մարտի 15-ի առավոտյան գնալ Բիթլիս, իսկ Չուխուր-Նորջենով Մշո դաշտ օգնության ուղարկված հրաձիգների երկու վաշտերին՝ վերադառնալ Բիթլիս:

Իմ կողմից մարտի 13-ին Մշո դաշտով Բիթլիսին օգնության ուղարկված փոխգնդապետ Գապոնովի ջոկատը դեռևս չէր հասել Բիթլիս՝ բոլոր կողմերից քրդերի անընդհատ հարձակումների հետևանքով: Դուլգովին օգնության ուղարկված հրաձիգների վաշտի հրամանատարից գիշերը տեղեկություն ստացվեց, որ Դուլգովի թնդանոթներն ու գնդացիները գտնվում են Ելնով տանող ճանապարհից 4 վերստ հեռավորության վրա: Վաշտի հրամանատարին կարգադրվեց դրանք շտապ հասցնել Ելնով:

Մարտի 15-ին՝ գիշերվա ժամը 12-ին, Բիթլիսից հեռագիր ստացա. «Դուլգովի թնդանոթներն ու գնդացիները բերվել են Ելնով և գտնվում են հրաձիգների պաշտպանության տակ: Դուլգովի և նրա հետևակի գտնվելու վայրը հայտնի չէ, սակայն հրետանավորները ենթադրում են, որ նա նահանջել է Բադե: Հրամայեցի հետախույզներին գտնել Դուլգովին և հայտնել հրամանը՝ հավաքել ու կարգի բերել դրուժինան և պաշտպանել Գյուզել կիրճը<sup>14</sup>: Հրետանային սպան գեկուցեց, որ պարզ երևում էր, որ Դուլգովի դեմ կենտրոնացվել էր ասկյարների 7 վաշտ: 200: Գնդապետ Օբրագցով: 15 մարտի՝ գիշերվա ժամը 2»:

13 Ճիշտը՝ **Խաշթաղ** կամ **Խաջթաղ**, գտնվում է Մոսկվանի Դատվան վարչական կենտրոնից հյուսիս Խուր գավառում:

14 **Գյուզել դերե**, հայերեն՝ **Ազնվացճոր**:

«Գիշերվա ժամը մեկին Ելնով հասավ գնդապետ Դուզովը թնդանոթներով, գնդացիներով, դրուժինիկների կիսավաշտի և կազակների մի մասի հետ: Դուզովը գեկուցեց, որ հակառակորդը հարձակվում է երեք խմբով. ճակատից՝ մոտ 600 հոգի, իր ձախ թևից դեպի Շեյխ-Ջում՝ 300-ից ավելի մարդ, և խոր շրջանցումով դեպի Բադե՝ 1000-ից ավելի ասկյարներ: Ասկյարներն աչքի են ընկնում իրենց բարձր հասակով, լավ են հագնված և լեռներով շարժվում են գրեթե վազքով: Նրա դրուժինայի ճակատը ձեղքված է, և դրուժինայի մի մասը գնդացիներով, թնդանոթներով, դրոշներով և ողջ գումակով ուժեղ գնդակոծության տակ սրընթաց անցավ Ելնով գյուղը, դրուժինիկների վաշտի 2 ½-ը կազակների մի մասի հետ է նահանջել Սահակից<sup>15</sup> լեռներով դեպի Ելնով, սակայն թե այժմ որտեղ են նրանք գտնվում, հայտնի չէ: Հակառակորդը հրետանի և գնդացիներ չունի: Մեր կորուստները հայտնի չեն:

Համադրելով, թե թուրքերը ինչպիսի համառությամբ են կասեցնում Եգուպովի [ջոկատի] առաջխաղացումը, և ինչպիսի համարձակությամբ են քրդերը հարձակվում Կարպի և Մշո դաշտի վրա, փախստականների ու քրդերի ցուցմունքները Խանով զգալի ուժերի կենտրոնացման մասին, Խոշտից<sup>16</sup> հարավ ճանապարհների մաքրումը, որոնցով իբր թե առաջանում են 4 գումարտակ, 4 թնդանոթ և 4 գնդացի՝ են եզրակացրի, որ թուրքերը մտադրվել են շրջապատել Բիթլիսը: Ուստի որոշեցի ջոկատը մոտեցնել Բիթլիսին: Փոխգնդապետ Եգուպովին այսօր՝ գիշերը, գաղտնի ետ են քաշում Բիթլիս: Նրա կայանատեղում թողնում են կիսահարյուրյակ՝ դիտարկման և հետախուզության համար, իսկ երկու վաշտերի գնդացիներով որպես առաջապահ՝ Սուրենայում: Դուզովի հրետանին բերում են Բիթլիս: Իրեն՝ Դուզովին, հրաձիգների վաշտի, հետախույզների, դրուժինիկների, գնդացիների և նրա մյուս զորամասերի հետ թողնում են մինչև Ելնովի լեռնանցքում իրավիճակի պարզվելը:

Կարպում մնում է դրուժինիկների 2 վաշտ հետախույզների և դրուժինայի գնդացիների հետ: Այսօր հրաձիգների երկու վաշտ գնդացիներով վերադարձնում են Չուխուր-Նորշենից, գիշերելու են Բալի-խանում<sup>17</sup>, որտեղ մտադիր են թողնել մինչև իրավիճակի պարզվելը: Այժմ Կոտնիում գիշերող Գապոնովի ջոկատին հրամայեցի լուսաբացին Հայկական դրուժինայի ստորաբաժանումների հետ շարժվել դեպի Բալի-խան: Գյուզեյյան ուղղությունն ապահովելու համար նախատեսում են Նարեկավանքի<sup>18</sup> լեռնանցքն ուղարկել մեկ վաշտ և շրջանցիկ ճանապարհով Սակ ուղարկել կազակների 2 հարյուրյակ: Պարտքս են համարում գեկուցել ստեղծված իրադրության մասին՝ գտնելով, որ տեղական պայմանների պատճառով իմ ջոկատի համար ստեղծվել է բավականին վտանգավոր իրավիճակ: 201: Օբրագցով»:

15 **Սակ** – գյուղ Բիթլիսի նահանգի համանուն գավառում, Բիթլիսից 15 կմ հյուսիս-արևելք: Ուներ 40 տուն և եկեղեցի:

16 **Խաշթաղ**:

17 Ճիշտը **Բաշ-խան**, Բիթլիսի ճանապարհին:

18 Խոսքը Բիթլիսից հյուսիս գտնվող Պոռե կամ Բոռ գյուղի **Սք Հովհաննես Մկրտիչ** վանքի մասին է, որը կոչվում էր նաև **Սք Գրիգոր Նարեկացի**:

Մարտի 15-ին՝ առավոտյան ժամը 8 անց 30 րոպեին, Բիթլիսի ջոկատից ստացվեց հետևյալ գեկուցագիրը. «Փոխգնդապետ Եգուպովի ջոկատը ետ է քաշվում նշված ուղեկալները: Նրա դեմ գտնվող հակառակորդը բացառապես ասկյարներ են՝ լավ հագնված, գումարտակից ավելի, զբաղեցնում են անհաղթահարելի ձևե բարձունքներ: Դուգովի ջոկատը ողջ գիշերը կենտրոնանում էր և շարունակում էր կենտրոնանալ: Մարդկանց առկայությունը և կորուստները պարզվում են: Գիշերը Գյուզելի կողմն ուղարկված հեծելապարեկը և հետախույզ հրաձիգները առայժմ հակառակորդի մասին տեղեկություններ չեն հայտնել: Դուգովը գեկուցում է. «Շեյխ-Ջումը գրավված է հակառակորդի կողմից, իսկ ինչ վերաբերում է Բադեին և Վերվանին, ապա հակառակորդն այնտեղ դեռևս չի հասել: Հեռավոր շրջանցիկ գորայունը կազմված էր 1000-ից ավելի մարդուց և առաջանում էր չորսական առանձին զորայուններով, որոնք ձգվում էին չորս վերստ: Նրա առաջացման ընդհանուր ուղղությունը մոտավորապես Բադեի և Վերվանի միջև է: Հետախույզության և կիրճի պաշտպանության համար այժմ շրջանցիկ ձանապարհով Բիթլիս-Դատվան-Թուխ-Սահակ<sup>19</sup> է ուղարկվել 2 հարյուրյակ: Նորքվանք վանքի մոտ առաջ են ուղարկում հրաձիգների մեկ վաշտ: Խոշտի մոտ քրդերն անցել են հարձակման և շրջապատել են Կարպը, սակայն մոտեցած և գնդացիներով զինված դրուժինիկները նրանց ետ շարտեցին՝ ստիպելով նահանջել: Մամնիկ-Չուխուր-Նորշենի դիմաց քրդերը խմբերով զբաղեցնում են լեռները: Գապոնովի ջոկատը առավոտյան ժամը 8-ին դուրս է եկել Մամնիկից: 203: Օբրագով»:

Մարտի 15-ի երեկոյան ժամը 9-ին [ստացվեց հետևյալ գեկուցագիրը]. «Գնդապետ Դուգովի ջոկատն այսօր՝ ամբողջ օրը, կենտրոնանում էր, մինչև երեկո չեն վերադարձել 143 դրուժինիկներ, 8 կազակներ և 534-րդ դրուժինայի պրապորշչիկ Ստանիսլավ Անդրեյի Մեդլերը: Հույս կա, որ նրանք դեռ կվերադառնան: Ելնովի մոտ գտնվող մեր մարտական պահպանության դիտորդական պահակակետերը, այսօր՝ ամբողջ օրը, Ելնովից հարավ գտնվող, մոտավորապես Կեշ-Շեմի-Խազա-Կումի բարձունքներում տեսել են թուրքական պահակակետեր, իսկ Սիսամ-դաղի լեռներում՝ զորաշղթաներ:

Ցերեկը Ելնովից ուղարկվեց կազակային հեծելապարեկը մինչև կամուրջ, որը գտնվում է Շեյխան-Ջումից 3 վերստ դեպի արևելք, ապա Բադեով Ռևան հասավ՝ ոչ մի տեղ հակառակորդի չհանդիպելով: Նրան [հեծելապարեկին] Ելնովից հետևեց և Վերվան ժամանեց հետախույզ հրաձիգների ստորաբաժանումը, իսկ ժամը 6 անց 30 րոպեին՝ Դուգովի ջոկատի սուսժենցիների ողջ հարյուրյակը: Բիթլիսի ապահովության համար ամբողջ օրը արևելքից միջոցներ ձեռնարկվեցին [առաջին] հրաձիգների վաշտը դիրքեր գրավեց Նորքվանքի մոտ գտնվող լեռնանցքում, երկրորդ՝ Բիթլիսից Դատվան-Թուխով Սահակ առաջ ուղարկվեց սուսժենցիների երկու հարյուրյակ: Հարյուրյակները գիշերելու են Թուխում: Երրորդ՝ Վերվանի ուղղությամբ հետախույզելու նպատակով Թուխից ուղարկվեց թուրքիկ փոստի պահակախումբը, չորրորդ՝ Բիթլիսից ուղիղ արևելք քարտեզում չնշված արահետներով առաջ ուղարկվեց սպայական հեծելապարեկ ուղեկցողների և իշխան Շախովսկու

19 Ճիշտը՝ Սակ:



հետ: Հեծելապարեկը, որին աջակցում էր հրաձիգների վաշտը, անցնելով 10 վերստ, հակառակորդին չհայտնաբերեց և մթության պատճառով վերադարձավ: Այսօր՝ առավոտյան, Եգուպովի ջոկատը նահանջեց դեպի Բիթլիս՝ Քղիի բարձունքում թողնելով կազակների կիսահարյուրյակ և Սուրենայի բարձունքում՝ մարտական պահպանություն: Քղիի մոտ հակառակորդը ակտիվություն չէր ցուցաբերում: Առավոտյան Կարպ գյուղի մոտ քրդերը կրկին հարձակման անցան Կարպում գտնվող 242-րդ դրուժինայի վաշտի վրա, որի վիճակը դարձավ ձգնաժամային: Օգնության ուղարկված 242-րդ դրուժինայի մյուս վաշտը 4 գնդացիներով, գրեթե ողջ գիշերը ձեռքերի վրա տանելով գնդացիները անպատմելի բարդ Բիթլիս—Կարպ ճանապարհով, առավոտյան՝ ժամը վեցին, մոտեցավ Կարպին, և, չնայած հոգնածությանը, վաշտերը և գնդացիները անմիջապես գործի դրվեցին: Քրդերը ետ շարավեցին, և դրուժինիկների վաշտերը գնդացիներով գրավեցին նրանց դիրքերը: Ճեղքումով հրապուրված՝ վաշտը շատ առաջացավ՝ հետապնդելով հակառակորդին, որի ուժերը ավելանալով հասան 600 հոգու: Վաշտը գրեթե շրջապատվեց և միայն գնդացիների օգնությամբ կարողացավ նահանջել քրդերից գրավված դիրքերը, որի ժամանակ զոհվեցին պրապորշչիկ Գերասիմ Նիկոլայի Սանենիձեն և երեք շարքայիններ: Բացի նշված կորուստներից՝ 292-րդ դրուժինայի 2 վաշտերը Կարպի մոտ մարտի 14–15-ը ունեցան ևս 10 վիրավոր: Դրուժինիկները մնացին դիրքերում: Պարտքս եմ համարում նշել 292-րդ դրուժինայի և նրա հրամանատար, փոխգնդապետ Շանսկիի մարտական որակները: Երեկոյան ժամը 8-ին Կարպ եկավ հրաձիգների վաշտ՝ դրուժինիկներին աջակցելու համար:

Մշո դաշտում՝ Մառնիկի և Կոտնիի մոտ, հայտնվել են քրդերի փոքրաթիվ ստորաբաժանումներ: Գապոնովի ջոկատը և Հայկական դրուժինան գիշերում են Մարկ-Կեսրանի<sup>20</sup> շրջանում: 214: Օբրագով»:

Բիթլիսի շուրջ տեղի ունեցող վերջին իրադարձություններից ես հստակ տեսնում էի, որ այնտեղ պետք է մոտ ժամանակներս սպասել ուժեղացող հակառակորդի կողմից անցում ակտիվ գործողությունների, ուստի նորից խնդրանքով դիմեցի կորպուսի հրամանատարին՝ իր պահեստազորից ուժեղացնելու Բիթլիսի ջոկատը: Այդ ժամանակ արդեն կորպուսային պահեստազորում էին գտնվում Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի 5-րդ և 6-րդ գնդերը: Սակայն իմ միջնորդությանը պատասխան չտրվեց: Այդ ժամանակ ես Մուշի ջոկատից լեռներով Բիթլիս, դեպի Մահբուբանք—Շինիստ—Ռաբատ—Խաշթաղ, դեպի Կարպ ուղարկեցի ևս մեկ գումարտակ (3-րդը) գնդի հետախույզների հետ՝ փոխգնդապետ Շչերբանինի<sup>21</sup> հրամանատարությամբ, գնդապետ Նոսկովից, որն այդ ժամանակ ենթարկվում էր ինձ, Կոզմա-Գյադուկի ջոկատից 7-րդ գնդի մեկ գումարտակ տեղափոխեցի Մուշ, իսկ գնդապետ Նոսկովին հրամայեցի պաշտպանել Կոզմա-Գյադուկ լեռնանցքը և հսկել Եփրատի ձախ ափը:

Ինձ մոտ եկան մահմեդականների ներկայացուցիչները՝ խնդրելով թույլ տալ սկսել ցանքը: Ես հաճույքով համաձայնեցի: Այդ ժամանակ նրանք սկսեցին

20 Սա 5 վերստանոց քարտեզի աղավաղում է, ձիշտը՝ Մորիս (Մորիս-Կարանի)՝ Մշո գավառի արևելյան՝ Վերին Չխուրի գավառակում:

21 Շչերբանին Ֆյոդոր Պոմպեյ – փոխգնդապետ, Կովկասյան 7-րդ հրաձգային գունդ:

խնդրել դրա համար իրենց անատուններ [լծկան] տալ: Ես նրանց խոստացա: Որոշ ժամանակ անց նրանք կրկին եկան ինձ մոտ խնդրանքով: Խնդրանքն այն էր, որ իրենց այդ աշխատանքի համար տրվեին հայեր, քանի որ իրենք երբեք ցանքս չէին արել, իսկ այդ ամենն անում էին հայերը: Այդ ժամանակ ես նրանց առաջարկեցի, որ իրենք անձամբ բանակցեն հայերի հետ և նրանց հետ գան ինձ մոտ: Սակայն հետագա իրադրությունը այնպես արագ սկսեց փոխվել, որ այդ գործն այդպես էլ մոռացության տրվեց:

Մարտի 16-ին՝ ժամը 8-ին, Բիթլիսից ստացվեց զեկուցագիր. «Գյուզել[դերեի] ուղղությամբ հակառակորդի պահակակետերը հին տեղերում են: Շեյխ-Ջումի ուղղությամբ ուղարկվել է հետախուզություն: Սղերդի ուղղությամբ փոփոխություններ չկան: Առաջապահի պետի կողմից հարցաքննված 2 հայեր և 1 ասորի հայտնեցին. առաջին՝ այս գիշեր ավելի քան 1000 ասկյարներ հրետանիով շրջապատել են Խանը<sup>22</sup>, նպատակ ունենալով գրոհելու Եգուպովի ջոկատը՝ ենթադրելով, որ նա այնտեղ է, երկրորդ՝ խանի վրա Եգուպովի հարձակման ժամանակ թուրքերը գործի մի մասը ետ են քաշել Կարպից, երրորդ՝ ասկյարների նշանակալից ուժեր ուղղվել են Մուշի ուղղությամբ: Նրանց ջոկատի շտաբում [լրացուցիչ] հարցաքննելուց հետո լրացուցիչ կզեկուցեմ: Կարպի ուղղությամբ հակառակորդը առաջվա նման զբաղեցնում է Կարպի դիրքերի դիմացի բարձունքները: Մեր հետախուզությունը չի կարողանում ձեռքել-անցնել դեպի Թերալիք: Նարեկավանքի լեռնանցքում հրաձիգների վաշտը գտավ սառցապատված թուրքական պահակակետ, որտեղ կար հրացաններով զինված 5 մարդ, և 15 հոգանոց ուղեկալ՝ առանց հրացանների: Վաշտը վերադարձրի Բիթլիս: Թուխում դիմավորեցին Բադեի դիրքերից եկած 292-րդ դրուժինայի 68 դրուժինիկների: 222: Օբրագցով»:

Իմ կողմից մարտի 15-ին հետախույզների հետ Մահբուբանք ուղարկված 7-րդ գնդի գումարտակը մնացել էր Վերին Մառնիկում: Ջոկատի այդչափ դանդաղ ընթացքն ինձ խիստ զարմացրեց, և ես դա ի ցույց դրեցի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Շչերբինին: Նա ինձ զեկուցեց, որ ինքը ստիպված է տեղ-տեղ ձեռքել մոտ մեկ սաժենի<sup>23</sup> հասնող ձնահյուսները՝ միջանցքներ բացելով ջոկատի առաջացման համար:

Գնդապետ Նոսկովից ստացա զեկուցագիր այն մասին, որ քրդերը՝ 500 հոգի, անցել են Կոզմա-դաղ լեռնանցքը, և որ դրուժինան նահանջել է դեպի Կըզըլ-դաղ: Ես հրամայեցի անմիջապես ետ շարժվել քրդերին լեռնանցքից և վերականգնել նախկին դրությունը, ինչը և կատարվեց:

Մարտի 17-ի առավոտյան փոխգնդապետ Շչերբանինից ստացա զեկուցագիր, որում ասվում էր, որ Մահբուբանքը գրավված է 7-րդ գնդի 3-րդ գումարտակի և հետախույզների կողմից. կորուստները՝ 1 սպանված և 10 վիրավոր: Ջոկատը մտադիր է հաջորդ օրը Ջորնիկ-ու գետի ձորով ուղևորվել դեպի Ռաբաթ: Այդ ողջ տարածքը բնակեցված է քրդերով, և պետք է բարձունքների շուրջ գտնվող գրեթե բոլոր գյուղերից նրանց դուրս քշել: Նրանք [քրդերը] նահանջում են անմատչելի

22 Իջևանատուն (խան) Բիթլիսի մուտքի մոտ:

23 1 սաժենը հավասար է 2,134 մ:

ձյունածածկ լեռներ և ջոկատի հեռանալուց հետո կրկին հայտնվում են թիկունքում ու սկսում հարձակվել ետ մնացածների, հատկապես հեռախոսավարների վրա, որոնք շատ գոհեր են ունենում:

Վաղուց ես ցանկանում էի այցելել Մուշի նշանավոր բնակիչներից մեկին՝ Զաֆար աղային, որը միշտ սրտագին վերաբերմունք էր ցուցաբերում հայերի նկատմամբ: Նրա մոտ գնացի թարգմանչի հետ: Նա մեզ շատ սիրալիք ընդունեց և հավանաբար շատ գոհ էր իմ այցելությունից: Մենք զրուցեցինք հայերի կոտորածի և նրանց նկատմամբ թուրքերի վերաբերմունքի մասին: Նա հաստատեց այն փաստերը, որոնք շարադրված էին շտաբս-կապիտան Կրիմ-Շամխալովի զեկուցագրում<sup>24</sup>: Ապա նա ներողություն խնդրեց և մի քանի թուղթով ինձ մենակ թողեց: Շուտով նա վերադարձավ մյուս սենյակից՝ բերելով Վանում պատրաստված մի հրաշալի արծաթյա մեծ սկահակ՝ խնդրելով ընդունել այն որպես հիշատակ: Ես շնորհակալություն հայտնեցի, սակայն հրաժարվեցի ընդունել: Իմ մերժումից նա անչափ տխրեց և նույնիսկ արտասվեց: Հավանաբար նրան թվաց, թե ես դժգոհ եմ նման նվերից, և նա կրկին դուրս եկավ՝ բերելով ինձ մի չքսաղ գորգ: Ես կրկին նրան խորին շնորհակալություն հայտնեցի ուշադրության համար, սակայն հրաժարվեցի այն ընդունել: Նա էլ ավելի ընկճվեց և հարցրեց ինձ, թե ինչ կարող է անել ինձ համար: Ես նրան խնդրեցի թեյ հյուրասիրել: Նա փութաց և շատ կարճ ժամանակ անց բերեց թեյ քաղցրավենիքներով:

Նա ինձ թախանձագին խնդրում էր իրեն ուղարկել էրգրում: Ես խոստացա նրան, սակայն, ցավոք, հետագա մարտական գործողությունները շեղեցին ինձ, և ես չկարողացա կատարել նրա խնդրանքը: Հետագայում ես իմացա, որ մեր հեռանալուց և Մուշը թուրքերի կողմից գրավվելուց հետո<sup>25</sup> Զաֆար աղային կախաղան են բարձրացրել:

Մարտի 20-ին դեռևս շարունակվում էր փոխհրաձգությունը Մահբուբանքի մոտ: Քրդերը չէին կարողանում հաշտվել, որ Մուսա բեկի նստավայրը մեր ձեռքում էր: Կարպից ուղարկված փոխգնդապետ Շանսկու ջոկատը Խասթաղի կողմից քրդերի անդադար հարձակումների հետևանքով գրավել էր այդ գյուղը: Գնդապետ Նոսկովի ջոկատից ուղարկված հեծելապարեկը հասավ մինչև Գենջ՝ չհանդիպելով հակառակորդին:

Զինված քրդերին դուրս քշելու և Մշո դաշտի վրա նրանց հարձակումները դադարեցնելու համար մարտի 21-ին հրամայեցի Չուխուր-Նորշենից, Մառնիկից, Ռաբաթից և այլ բնակավայրերից փոքրաթիվ ջոկատներ ուղարկել քրդական շրջանները: Բացի 2 գյուղերից՝ մյուսներում քրդերը հպատակվեցին:

Ջոկատներին պարենի մատակարարման խնդիրը ոչ միայն չէր բարելավվում, այլև օրեցօր ավելի էր սրվում: Ես, իհարկե, այդ մասին հեռագրերով անընդհատ հիշեցնում էի կորպուսի հրամանատարին, նրա շտաբին և կորպուսի համբարակի պետ գնդապետ Բարանովսկուն: Վերջապես կորպուսի հրամանատարից ստացա

24 Շտաբս-կապիտան Կրիմ-Շամխալովի 1916 թ. փետրվարի 14-ի զեկուցագիրը տպագրվել է Թ. Նազարբեկյանի ներկա հուշերի 9-րդ տետրում (տես «Վէմ», Եր., 2020, N 4, էջ 306-310):

25 Թուրքերը Մուշը վերագրավել են 1916 թ. հուլիսի 25-ի գիշերը (տես Սահակյան Ռ. Օ., Կարո Սասունու զեկուցագրերը Տարոնի հայության վիճակի մասին, «Վէմ», Եր., 2010, N 2, էջ 190):

ուրախալի հեռագիր. «Ավելի շատ փոխադրամիջոցներ ուղարկեք Սեկավի<sup>26</sup> գյուղ, որտեղ բացվել է կորպուսի համբարակային պարենային խանութ»: Իհարկե, այս նորությունը բոլորիս շատ ուրախացրեց: Հրամայեցի հետևակին, հրետանուն, հեծելազորին և բոլոր հաստատություններին անմիջապես ուղարկել փոխադրամիջոցներ և նույնիսկ ի վնաս մարտական պատրաստությանը թույլատրեցի հրետանուն ուղարկել մարտական ձիերը: Զինվորական գումակը դուրս եկավ Մուշից դիվիզիոնի համբարակի հետ: Անցավ մեկ, երկու օր, երրորդը և վերջապես չորրորդը, իսկ նրանք չկային: Բնականաբար, ես սկսեցի անհանգստանալ: Վերջապես չորրորդ օրը՝ երեկոյան, գումակը դիվիզիոնի համբարակի հետ վերադարձավ, սակայն, ցավոք սրտի, առանց պարենի: Դիվիզիոնի համբարակը գեկուցեց, որ այնտեղ, այսինքն՝ Սեկավիում, կառուցվել էր պահեստ՝ հետևյալ ցուցանակով՝ «4-րդ կորպուսի պարենամթերքի համբարակային պահեստ», որտեղ կար մի սոված համբարակային աստիճանավոր, որին ստիպված են եղել նույնիսկ կերակրել: Այդ մասին ես անհապաղ գեկուցեցի կորպուսի հրամանատարին, քանի որ արդեն երկու ամիս էր անցել, ինչ ջոկատները առաջացել էին դեպի Մուշ և Բիթլիս: Թվում էր, թե ժամանակը բավարար էր, որպեսզի ձիշտ կազմակերպվեր մատակարարումը. այն հնարավոր էր իրականացնել երկու ուղղություններով՝ Խնուսից և Մանագկերտից, և նույնիսկ Վանա լճով: Սակայն, ինչպես երևում է, այդ հարցը վերևում ոչ մեկին չէր հետաքրքրում: Այդ ժամանակ բոլոր ղեկավար անձինք ձգտում էին առաջանալու և գրավելու հակառակորդի հնարավորինս ավելի շատ տարածք:

Գնդապետ Նոսկովի ջոկատին կարգադրված էր մոտենալ Կոզմա-Գյադուկ լեռնանցքին: Նա փորձեց, սակայն չկարողացավ ճանապարհների անանցանելիության պատճառով, քանի որ լեռնանցքում շատ խոր ձյուն կար:

Բիթլիսի ուղղությամբ թուրքերը սկսել են աստիճանաբար լեռներից իջնել կիրճ: Բոլոր նշաններից պետք էր ենթադրել, որ նրանք ինչ-որ բան են ծրագրում:

[Մարտի] 23-ին գնդապետ Նոսկովը ջոկատ ուղարկեց Գենջը գրավելու համար: Հակառակորդը, սակայն, մարտի 20-ին մեր հեծելապարեկի հայտնվելուց հետո գրավել և ամրացրել էր Գենջը, ուստի ուղարկված ջոկատը փոքրաթիվ լինելու պատճառով չկարողացավ վերագրավել գյուղաքաղաքը: Դրանից հետո՝ մարտի 24-ին, արդեն ուժեղացված կազմով ջոկատը (հրաձիգների 2 վաշտ, Հայկական 2-րդ դրուժինայի 2 վաշտ, 2 լեռնային թնդանոթ և կազակների հարյուրյակ) կրկին ուղարկվեց, որը դուրս քշեց հակառակորդին և գրավեց Գենջը: Հակառակորդը նահանջեց հարավ և նոր դիրքեր գրավեց: Այդ նույն օրը փոխգնդապետ Շչերբանինը Փիսիխինա գյուղի մոտ գործ ունեցավ քրդերի մոտ 600 հոգանոց խառնամբուխի հետ: Այդ գյուղը գրավվեց: Քրդերը մեծ կորուստներ ունեցան, իսկ մեր կողմից զոհվեցին 3 ու վիրավորվեցին 10 հրաձիգներ:

Բիթլիսից ստացա գեկուցագիր, որ այնտեղ սկսել է տարածվել բժավոր տիֆը: Ընդհանրապես Բիթլիսը նաև խաղաղ ժամանակներում, չգիտես ինչու, միշտ բժավոր, որովայնային և հատկապես կրկնվող տիֆի օջախ է եղել: Ցավոք սրտի, այդ ծանր ժամանակներում, երբ բոլոր մտքերն ուղղված էին մարտական իրադրությա-

26 Մշո դաշտի **Ցխավու** հայաբնակ գյուղը:

նը, դեռևս հնարավոր չէր ձեռնարկել այն վճռական միջոցները, որոնք անհրաժեշտ էին տիֆը վերացնելու համար:

Մարտի 25-ին՝ ցերեկվա ժամը 11-ին, ստացա զեկուցագիր, որ թուրքերն անցել են հարձակման: Նրանք ձգտում են շրջառելու երկու թևերը և անցնելու մեր թիկունքը, որպեսզի բացարձակապես կտրեն Բիթլիսը Մշո դաշտից:

Դեպի Բիթլիս շարժվող փոխգնդապետ Շչերբանինի դեմ քրդերը նույնպես անցան հարձակման: Փոխգնդապետ Եգուպովին իր ջոկատի հետ հրամայված էր նահանջել դեպի Բիթլիս:

Ամբողջ օրը ծանր մարտեր էին ընթանում: Ես խնդրեցի կորպուսի հրամանատարին գորաշարժային պահեստագործից մի քանի գումարտակներով ժամանակավորապես ուժեղացնել Բիթլիսի ջոկատը, որպեսզի այն հնարավորություն ունենար կտրուկ հարվածով ետ մղելու և թուլացնելու հակառակորդին, որից հետո կարելի էր այդ գումարտակները ետ քաշել: Կորպուսի հրամանատարը մերժեց ու միայն Չարբորխի<sup>27</sup> և Կյում-կյում-վադիկի<sup>28</sup> գորաշարժային պահեստագործին հրամայեց մոտենալ Մուշին:

Մարտի 26-ին հակառակորդի հարձակումը շարունակվում էր: Նա ավելի ու ավելի խորն էր շրջառում մեր թևերը: Ջոկատի վիճակն ավելի քան աղետալի էր դառնում: Գիշերը ես կորպուսի հրամանատարից ստացա հրաման Մուշի ամբողջ ջոկատը լեռներով ուղարկել Ռաբաթ և Շինիստ, սակայն ես ինքս դա արդեն արել էի մինչև հրամանը ստանալը, քանի որ Մուշի ջոկատն ամբողջությամբ գտնվում էր իմ հրամանատարության ներքո: Ես այնտեղ ուղարկեցի 7-րդ գնդի իմ վերջին երկու գումարտակները՝ գնդապետ Կրեմենեցկու հրամանատարությամբ, իսկ փոխգնդապետ Շչերբանինին հրամայեցի Շինիստից արագ անցնել Խոշտ:

Կորպուսը [հրամանատարությունը] զարմանալիորեն անտարբեր այդ իրադարձությունների նկատմամբ: Նա ինչ-որ անիրականանալի պլաններ էր կազմում հակառակորդի շրջապատման և գերեվարման վերաբերյալ՝ չմտածելով, թե ինչ կլինի Բիթլիսի ջոկատի հետ մինչև մեր հասնելը:

Մարտի 27-ին Բիթլիսի ջոկատի վիճակն էլ ավելի վատթարացավ, քանի որ հակառակորդն էլ ավելի էր շրջառել նրա թևերը, իսկ մեր աջ թևը շրջառածները նույնիսկ անցել էին մեր թիկունքը: Ձախ թևում շտաբս-կապիտան Շամխալովի հրամանատարությամբ 8-րդ գնդի վաշտը, որը պաշտպանում էր մեր ձախ թևը, շրջապատվեց, և նրան մի ինչ-որ հրաշքով հաջողվեց գիշերը ձեռքել նրանց օղակումը: Մարտն արդեն ընթանում էր քաղաքի արվարձանների մերձակայքում:

Կարպի ջոկատը մեկուսացված էր: Վերին Մառնիկ-Շինիստ-Ռաբաթ-Խաշթաղ իմ կողմից օգնության ուղարկված 7-րդ գնդի գումարտակները մեծ դժվարությամբ ձեռքեցին Մուսա բեկի կողմից հավաքված զինված քրդերի հոծ բազմության դիմադրությունը, որոնք աներես ճանձերի նման շարունակ հարձակվում էին ջոկատի վրա տարբեր կողմերից ու տարբեր վայրերից: Հավանաբար նրանց նպատակն էր ձգձգել օգնության ժամանումը:

[Մարտի] 27-ին Խնուսից հեռագիր ստացա, որ կորպուսի հրամանատարը [մարտի] 28-ին կլինի Մուշում: Հրամայեցի նրա համար պատրաստել 3 սենյականոց

27 Չարբորի:

28 Գյումգյումի (Վարդի) հովիտ:

բնակարան: [Մարտի] 28-ին նա եկավ երկանիվ սայլակով կորպուսի շտաբին կից գտնվող Գլխավոր շտաբի կապիտան Կիլիմկարովի հետ:

Կապիտանի հետ նա ճաշեց ինձ մոտ՝ շտաբում: Ես նրան գեկուցեցի Բիթլիսի ջոկատի ծանր կացության և ջոկատի ձակատագրի շուրջ իմ մտահոգության մասին: Նա ինձ ոչինչ չպատասխանեց, սակայն շարունակ ինչ-որ բանի մասին էր խորհրդակցում կապիտան Կիլիմկարովի հետ: Վերջինիս, չգիտես ինչու, բոլորը համարում էին կորպուսի չար հանձար և չէին սիրում, բացի այդ՝ ոչ ոք չէր գնահատում նրան, իսկ ինչո՞ւ պետք է գնահատեին մի մարդու, որը որևէ ռազմական գիտելիք և փորձ չուներ: Ես խնդրեցի կորպուսի հրամանատարին, որ [մարտի] 29-ին գնամ Բիթլիս: Նա թույլատրեց:

Մարտի 29-ին կարգադրություններ անելուց հետո ինձ հաջողվեց միայն ժամը մեկի կողմերը շտաբի պետի, շտաբի փոքրաթիվ աշխատակիցների և իմ պահակախմբի հետ մեկնել: Երբ սկսեց մթնել, մենք հազիվ հասել էինք Վերին Մառնիկ: Գյուղը գրեթե ամբողջությամբ ավերված էր: Ստիպված էինք գիշերել շինությունում, որը բաղկացած էր երեք պատից, իսկ չորրորդի վրա կախեցինք վրանի պատառ: Շուրջբոլորը ձյուն էր, և գիշերը սառնամանիք էր: [Մարտի] 30-ին՝ վաղ առավոտյան, դուրս եկանք Մառնիկից: Դեպի Մահրուբանք տանող ճանապարհը խիստ զառթվեր էր: Ես անձամբ համոզվեցի, թե ինչպիսի դժվարություններ է ստիպված եղել հաղթահարել 7-րդ գնդի գումարտակը՝ փոխգնդապետ Շչերբանինի գլխավորությամբ՝ ձյան միջով միջանցքներ բացելով առաջ շարժվելու համար, և որ իմ հանդիմանությունը փոխգնդապետ Շչերբանինին դանդաղ ընթացքի համար բացարձակապես անտեղի էր:

Այդ բացված միջանցքների մուտքերն ու ելքերը ծածկված էին կենդանիների դիակներով: Ձիերին դժվարությամբ էին ստիպում անցնել այդ դիակների վրայով: Ձիերի ոտքերին ոտնահարուկներ էին առաջանում, իսկ մի քանիսը վարակվեցին դիակների թույնով, որից հետո սատկեցին: Իմ ձին նույնպես ոտնահարուկ ունեցավ, սակայն իմ ձիապանը փորձառու էր և առաջին իսկ դադարի ժամանակ այդ տեղերը յոդով խարկեց, ինչի շնորհիվ իմ ձին չտուժեց: Մենք, իհարկե, ուշադրություն չդարձրինք այդ հանգամանքի վրա, և երբ ոմանց ձիերը սատկեցին, միայն այդ ժամանակ հասկացանք, թե ինչի պատճառով էր դա: Այդպես սատկեց դիվիզիոնի բժշկի լավ ձին:

Ճանապարհը տեղ-տեղ ծածկված էր ձյան բավական հաստ շերտով, իսկ ցածրադիր վայրերում և ձորակներում անհաղթահարելի ցեխ էր: Կոմշանուտ<sup>29</sup> դաղի լեռնային գագաթը չհասած՝ մենք հանդիպեցինք 200-250-ական սասունցի հայ փախստականներից կազմված մի քանի խմբերի, որոնք ուղևորվում էին Մուշ: Ցուրաքանչյուր խմբի ուղեկցում էին մի քանի զինված քրդեր, որոնք հավատարիմ էին փախստականներին ու պաշտպանում էին նրանց: Թշվառ փախստականները դժվարությամբ էին առաջանում, քանի որ ճանապարհը դժվարանցանելի էր. ստիպված էին քայլել ձյան, իսկ տեղ-տեղ՝ մինչև ծունկը հասնող ցեխի միջով, իհարկե առանց կոշիկի: Նրանք գրեթե ունեցվածք չունեին, ինչ որ կարող էին, կրում էին: Կանայք գրկած տանում էին ծծկեր և փոքրահասակ երեխաներին: Նրանց աչ-

29 Ռուսական 5 վերստանոց քարտեզում *Комшанут даг*, որի հայերեն ձևը կլինի **Գոմշնուտ սաբ**: Սիմսարի մի ճյուղը կազմող խութի լեռներն են՝ Մշո գավառի սահմանագլխին:

քերում կարդացվում էր սարսափի և սարսափելի հոգնածություն: Խոշորամարմին ժողովուրդ էր, հատկապես կանայք, և նրանցից շատերը գեղեցիկ էին: Ես այնպես էի ուզում սրտալից խոսել և քաջալերել նրանց մայրենի լեզվով, սակայն, ամոթ ինձ, ես դա կարող էի անել միայն մտքով, քանի որ մայրենի լեզվին այն աստիճան չէի տիրապետում, որ կարողանայի անձամբ կատարել իմ ցանկությունը:

Երբ անցանք Կոմշանուտ դաղի լեռնաշղթան, սկսեցինք լսել հաճախակի հրացանային կրակոցներ. վաղօրոք ուղարկված հրաձիգները մարտ էին մղում Մահբուբանքի համար, ուր նահանջել էին քրդերը, որոնք ողջ ընթացքում ձգտում էին վերագրավելու Մահբուբանքը: Կաղզվանք<sup>30</sup> գյուղի մոտ մենք կանգ առանք հանգստանալու համար, և, բացի այդ, ես ցանկանում էի իմանալ հրաձիգների մարտական գործողությունների արդյունքի մասին: Մանրամասներ իմացա Մահբուբանքի գրավման մասին: Հակառակորդը համառ մարտից հետո դուրս էր մղվել Մահբուբանքից: Մուսա բեկի տունն ամբողջությամբ քարուքանդ էր արվել: Հակառակորդը նահանջել էր հարավ և ողջ ընթացքում ջանում էր կրկին գրավել Մահբուբանքը, սակայն դա նրան չհաջողվեց, և նա մեծ կորուստներով նահանջեց իր դիրքերը:

Հանգստից հետո մենք շարունակեցինք ճանապարհը Զորիկ սու գետի ձորով: Բնությունն այդտեղ բացարձակապես այլ էր: Կային ոչ այնքան մեծ փշատերև անտառներ և շատ կաղնիներ: Այդ ձորը փոքր-ինչ հիշեցնում է Բորժոմի տեղանքը, բայց, իհարկե, ավելի փոքր չափերով: Ճանապարհին հանդիպող գյուղերն անմարդաբնակ էին:

Շինիստ հասանք, երբ արդեն մթնել էր: Չէինք հասցրել տեղավորվել, երբ ինձ հաղորդեցին, որ մեր ետևից գալիս է կորպուսի հրամանատարը: Ես, իհարկե, շատ զարմացա, քանի որ այդ մասին հրաժեշտից առաջ կորպուսի հրամանատարն ինձ ոչինչ չէր ասել: Չէի կարողանում հասկանալ, թե ինչու էր նա դա ինձնից թաքցրել: Բացի այդ՝ ես վախենում էի, որ նրա վրա կարող էին հարձակվել քրդերը, որոնք մութն ընկնելուց հետո շարունակ դես ու դեն էին ընկնում, որ գոհ գտնեին: Ես առաջանում էի նախագզուշական միջոցներ ձեռք առնելով և իմ պահակախմբի, կազակների հարյուրյակի պաշտպանությամբ, իսկ նա որևէ իրական ուժ չունեի: Ես անմիջապես նրան ընդառաջ ուղարկեցի իմ պահակախմբի մի մասին: Ստիպված էինք այլ սենյակ փնտրել՝ նրան զիջելով իմը որպես ավելի լավը: Շուտով նա եկավ կապիտան Կիլիմկարովի<sup>31</sup> հետ: Ես նրանց հրավիրեցի ինձ մոտ՝ շտաբ թեյելու, որից հետո յուրաքանչյուրն իր դիրքը գնաց: Նրան հավանաբար ամենևին չէր անհանգստացնում Բիթլիսի ձակատագիրը, այլապես նա այդ մասին կասեր մեր գրույցի ժամանակ:

Գիշերվա ընթացքում Բիթլիսից ստացվեցին շատ տագնապալի լուրեր: Ես միայն մի հույս ունեի՝ 7-րդ գնդի 3 գումարտակների՝ ժամանակին տեղ հասնելը:

Հաջորդ օրը՝ մեր վաղ նախաձաշից հետո, մենք կորպուսի հրամանատարի հետ առաջ շարժվեցինք՝ ուղևորվելով դեպի Խաշթաղ գյուղը: Նախաձաշի ընթացքում տեղի ունեցավ փոքրիկ միջադեպ, որն ինձ խորապես վրդովեցրեց: Կապի-

30 Խուլի Կճանք գյուղը Աբ Աղբերիկ վանքի մոտ:

31 Կիլիմկարով Իռակիմ Ֆյոդորի (1877-1976) – Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից, Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շտաբ-սպայի պաշտոնակատար, կապիտան (09.10.1915-02.09.1916), Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի պետի պաշտոնակատար, գնդապետ (25.11.1917):

տան Կիլիմկարովը կորպուսի հրամանատարի և իմ շտաբի ներկայությամբ իրեն թույլ տվեց գնդապետ Օբրագցովի մասին խոսել որպես վախկոտի: Նա նրան երբեք չէր տեսել և չէր էլ ճանաչում: Հավանաբար նա այդպես ցանկանում էր, չգիտես ինչու, հաճոյանալ կորպուսի հրամանատարին: Նրա թուլությունն էր քծնել դեկավարությանը: Ես, չնայած կորպուսի հրամանատարի ներկայությանը, նրան այնպես շարքեցի, որ նա արդեն չգիտեր, թե ինչպես արդարանար: Եվ ես զգացի, որ, հանձին նրա, ձեռք բերեցի թշնամու, և որ նա այդ պահից ինձ ատեց ու սկսեց վատ վերաբերվել: Այդ միջադեպի ընթացքում կորպուսի հրամանատարը ոչ մի բառ չասաց:

Ճանապարհն անցնում էր գետակի ափով և մինչև լեռնանցքը բավականին տանելի էր: Ճանապարհին հանդիպող գյուղերը, դատելով արտաքին տեսքից, ունևոր էին: Շինությունները Մշո դաշտի հայերի շինությունների համեմատ ավելի բարվոք էին: Տներն ունեին պատշգամբի և պատուհանների նման ծածկեր: Իհարկե, մեր մոտենալուց առաջ ամենուրեք բնակիչները փախել էին մոտակա լեռները:

Դեպի Խոշտ առաջանալու ժամանակ մեզ հասավ Կովկասյան 6-րդ հրաձգային գունդը (3 գումարտակ՝ 4 լեռնային թնդանոթներով): Դա ինձ խիստ զարմացրեց, քանի որ այդ մասին ես բացարձակապես տեղյակ չէի և չէի հասկանում, թե ինչու են դա ինձնից թաքցրել: Հետագայում ես իմացա, որ նման միտք կորպուսի հրամանատարին հուշել էր Կիլիմկարովը. որքան Բիթլիսի ջոկատի վիճակը վատանա, այնքան լավ, քանի որ հակառակորդն ավելի ու ավելի կխորանա Բիթլիսի կիրճում, իսկ այդ ժամանակ 6-րդ գունդը 4 թնդանոթներով խոր գորաշարժով կանցնի նրանց թիկունքը Բիթլիսի և Սդերդի միջև, ինչի հետևանքով հակառակորդի՝ Բիթլիսի մոտ գործող ողջ ջոկատը կմեկուսացվի:

Երբ ես այդ մասին իմացա, կորպուսի հրամանատարին զեկուցեցի, որ «Մոտկան»<sup>32</sup> տեղանքը ոչ միայն ձմռանը, երբ բոլոր լեռները ծածկված են խոր ձյունով, այլև նույնիսկ ամռանը այնպիսին է, որ գրաստները դժվարությամբ են շարժվում: Այդ տեղանքի անմատչելիության մասին վկայում են ինչպես մեր, այնպես էլ թուրքական [տեղագրական] քարտեզները, որոնցում այդ տեղամասը թողնվել է սպիտակ գույնով: Նա, իհարկե, չհավատաց ինձ:

Ցավալի էր նայել 6-րդ գնդի մարդկանց, երբ նրանք շարժվում էին, որոնց մեծ մասը բոքիկ էր, արյունոտ ոտքերով, հյուծված դեմքերով և գրեթե առանց պարենի: Դա լեռներով առանց հանգստի նրանց ռազմերթի հինգերորդ օրն էր: Կորպուսի հրամանատարն առանց կարեկցանքի դիտում էր մարդկանց տառապանքը: Այդ հանգամանքը ապշեցրել էր ոչ միայն ինձ, այլև իմ շտաբի պետին և դիվիզիոնի բժշկին:

Երբ սկսել էր մթնել, մենք հասանք Խոշտ գյուղ: Կորպուսի հրամանատարն ինձնից շուտ էր հասել: Այդտեղ ես ուրախալի լուր ստացա, որ Բիթլիսի ձգնաժամային վիճակը հաղթահարվել էր իմ կողմից գնդապետ Կրեմենեցկու հրամանատարությամբ ուղարկված 3 գումարտակների՝ ձիշտ ժամանակին մեր աջ թևը հասնելու շնորհիվ: Այդ երեք գումարտակներին հաջողվել էր մեկուսացնել հակառակորդի այն գորամասերը, որոնք անցել էին մեր թևը և թիկունքը: Մեր ռազմա-

32 **Մոտկան** – լեռներ Սասունի արևելքում:



վարն էին՝ մոտ 500 ասկյարներ, սպաներ և գնդացիներ: Կենտրոնն անցել էր հարձակման և հակառակորդին ետ մղել հին դիրքերը: Ինձ համար զարմանալի էր, թե թուրքերն ինչու Խոշտի ուղղությամբ առաջապահ զորամաս չէին ուղարկել, որպեսզի կասեցնեին Բիթլիս օգնության շտապող ջոկատի առաջխաղացումը: Այդ դեպքում նրանք կարող էին նախ հաշվեհարդար տեսնել Բիթլիսի, ապա՝ օգնության շտապող ջոկատի հետ: Ես կարծում եմ, որ թուրքերը չափից ավելի համոզված էին, որ կարճ ժամանակում կհաղթեն Բիթլիսի ջոկատին: Հետո ես իմացա, որ Բիթլիսի ջոկատի դրությունն այն աստիճան ճգնաժամային էր, որ շտաբի պետ, կապիտան Գոտովցևը անընդհատ խորհուրդ էր տալիս գնդապետ Օբրագցովին հանձնելու Բիթլիսը և նահանջելու դեպի Դատվան: Բայց դրան գնդապետ Օբրագցովը պատասխանել էր. «Ես այստեղ կմեռնեմ, սակայն Բիթլիսից չեմ հեռանա»: Նա նույնիսկ նախապատրաստվել էր մահվան՝ հագնելով մաքուր սպիտակեղեն: Գնդապետ Օբրագցովի վճռականությունը փոխանցվել էր ջոկատին, և ջոկատը պաշտպանվում էր՝ ցուցաբերելով քաջության և տոկունության հրաշքեր: Ինչպես երևում է, կորպուսի հրամանատարին դուր չէր եկել, որ վտանգը շրջանցել էր Բիթլիսը: Նա դեռևս շարունակում էր երազել Կիլիմկարովի հետ միասին կազմած պլանի մասին:

Այնուամենայնիվ, կորպուսի հրամանատարը 6-րդ գնդի հրամանատար, գնդապետ Սիլիկովին տվեց իր առաջադրանքը և հրամայեց անհապաղ ձեռնամուխ լինել դրա կատարմանը: Գնդապետ Սիլիկովը մի փոքր հանգստից հետո իր ջոկատով առաջ շարժվեց՝ կատարելու իրեն տրված առաջադրանքը:

Գիշերը Խաշթաղում ես չէի կարողանում քնել, քանի որ շատ ապրումներ էի ունեցել Բիթլիսի ջոկատի համար, և ես դուրս եկա շինությունից ու ակնատես եղա զարմանալի տեսարանի: Խաշթաղ վայրի լեռներից դեպի մեզ էին վազում մոտ 50 բացարձակապես մերկ զինվորներ: Երբ նրանք տեղ հասան, ես նրանց հարցուփորձ արեցի: Պարզվեց, որ նրանց գերել էին քրդերը, երբ մեր զորքն անցնում էր Շինիստով Ռաբաթ և Խաշթաղ: Նրանք հիմնականում մեր հեռախոսավարներն էին ու ետ մնացածները: Նրանք պատմեցին, որ քրդերն իրենց ներկայությամբ կերուխում էին անում, ոչխարի միս խորովում: Նրանց հետ կային մեծ թվով երիտասարդ հայուհիներ, որոնց իրենց ներկայությամբ անարգում էին՝ ամենևին չքաշվելով իրենց ներկայությունից, իսկ զինվորներին նետում էին կրծած ոսկորներ, որից հետո մերկացնում էին նրանց ու միաժամանակ կրակ բացում, և ոմանք սպանված մնացին ճանապարհին:

[Մարտի] 31-ին կորպուսի հրամանատարը կապիտան Կիլիմկարովի հետ, ես իմ շտաբի ու պահակախմբի հետ ուղևորվեցիք դեպի Կարպ գյուղը: Երբ հանգստանում էինք Կարպում, ժամանեց գնդապետ Սիլիկովն իր ջոկատով և զեկուցեց, որ այն տեղանքով, ուր նա ուղարկվել էր, անհնար է առաջանալ, քանի որ ոչ միայն ճանապարհներ, այլև որևէ արահետ չկա: Նրա հետ եղած ուղեկցողները հաստատեցին նույնը և ասացին, որ միայն մեկ ամսից հնարավոր կլինի առաջ շարժվել: Բայց գնդապետ Սիլիկովը, այնուամենայնիվ, փորձում է առաջանալ, սակայն մի քանի րոպեում կորցնում է մի քանի ձի: Կորպուսի հրամանատարը հրամայեց գնդապետ Սիլիկովին իր ջոկատի հետ գնալ Բիթլիս: Նա [Սիլիկովը] խնդրեց թույլ

տալ հանգստանալ, քանի որ իր մարդիկ գիշերվա ընթացքում շատ էին հոգնել: Նրան թույլատրվեց մնալ մի քանի ժամ:

Կարպից Բիթլիս տանող ճանապարհը ծանր էր: Պարզվեց, որ կորպուսի հրամանատարը տառապում էր գառիվայրերի և ձորակների վախով<sup>33</sup>: Նա լեռան թեք լանջին բավականին լայն ճանապարհով դժվարությամբ էր քայլում՝ ձեռքերով կառչելով դարալանջից: Ես ցանկանում էի օգնել նրան, սակայն նա մերժեց իմ օգնությունը և խնդրեց իրեն մենակ թողնել՝ ասելով, որ ինքը կամաց-կամաց կանցնի և կհասնի մեզ: Մենք, փոքր-ինչ առաջանալով, կանգ առանք՝ սպասելով նրան:

Բիթլիս հասանք ցերեկվա մոտ ժամը 2-ին: Բիթլիսի հարավարևմտյան հատվածը, ուր մենք մտանք, մեզ վրա հաճելի տպավորություն գործեց, քանի որ այն այդ կողմից հարուստ էր այգիներով կամ ավելի ճիշտ՝ առանց ցանկապատի մրգատու ծառերով:

Բիթլիս մտնելիս մեզ դիմավորեց Բիթլիսի ջոկատի հրամանատար, գնդապետ Օբրագցովը, որը գեկույցով մոտեցավ կորպուսի հրամանատարին, սակայն վերջինս նրան սառը ընդունեց և շնորհակալություն չհայտնեց պաշտպանության համար: Կորպուսի հրամանատարին հատկացվեց երկհարկանի տուն՝ բարձր առաստաղ ունեցող սենյակներով և եվրոպական կահույքով, որտեղ տեղավորվել էր գնդապետ Օբրագցովն իր շտաբի հետ: Այդ տանը մինչև Բիթլիսի գրավումը տեղավորվել էր փաշան: Ես իմ շտաբի հետ ժամանակավորապես տեղավորվեցի զորահանգրվանի պետի մոտ: Այն նույնպես երկհարկանի մեծ շինություն էր և հեռու չէր կորպուսի հրամանատարի գտնվելու վայրից:

Հաջորդ օրը ժամանեցին 5-րդ գնդի 2 գումարտակներ, որոնք, ինչպես պարզվեց, եկել էին մեր ետևից: Այդ մասին նույնպես ես ոչինչ չգիտեի: Այսպիսով՝ կորպուսի հրամանատարը գրեթե ողջ զորաշարժային պահեստագործ կենտրոնացրեց Բիթլիսում:

Նույն օրը մենք բոլորս ջոկատի պետի հետ գնացինք դիտելու մեր և հակառակորդի դիրքերը: Այնտեղ փոխհրաձգություն էր ընթանում: Թուրքերը ետ մղվելուց հետո կրկին զբաղեցրել էին իրենց նախկին ամրացված դիրքերը: Այստեղ կորպուսի հրամանատարն անձամբ համոզվեց, թե ինչպիսի անառիկ դիրքեր էին գրավել թուրքերը:

Այդ նույն օրը Վանա լճի հարավային ափից՝ Վանի ջոկատից Գյուզել-դարայի հովիտ օգնության եկավ Հայկական 3-րդ դրուժինան կազակների 2 հարյուրյակների հետ: Այսպիսով՝ Բիթլիսում կենտրոնացավ նշանակալի քանակությամբ զորք, որը թվապես գերազանցում էր հակառակորդին: Ես ենթադրում էի, որ կորպուսի հրամանատարը կօգտվի այդ ուժից և գործուն քայլերի կդիմի հակառակորդին ջախջախելու համար կամ էլ ծայրահեղ դեպքում կատիպի հակառակորդին նահանջել դեպի Խան և Սղերդ, որպեսզի իշխող բարձունքները լինեին մեր ձեռքերում: Նման գործողությունը Բիթլիսի ջոկատին զգալի առավելություն կտար և զգալիորեն կթեթևացներ Բիթլիսի պաշտպանությունը, նույնիսկ եթե հակառակորդին հաջողվեր ստանալ զգալի համալրում: Տեսնելով, որ նա ոչինչ չի նախաձեռնում, ես

33 Նման վիճակը կոչվում է ակրոֆոբիա, որը կարող է վերածվել ֆոբիայի, երբ առաջանում է վախ անգամ ոչ փոքր բարձրություններից և ընկնելու հավանականության բացակայության ժամանակ:

նրան գեկուցեցի իմ առաջարկությունը, սակայն որևէ պատասխան նրանից չստացա: Երկու օր անց նա կապիտան Կիլիմկարովի հետ մեկնեց Մշո դաշտով Խնուս՝ կարգադրություն անելով Բիթլիսի պաշտպանության վերաբերյալ, որի ջոկատի պետ էի նշանակվել:

Բիթլիս քաղաքը Փոքր Ասիայի թուրքական նշանավոր քաղաքներից մեկն է<sup>34</sup>: Գտնվում է բավականին խոր կիրճում: Բիթլիս-ու գետակը քաղաքը բաժանում է երկու մասի: Գետակը նեղ է, լեռնային և շատ հորդահույզ, ծանծաղուտով հնարավոր չէ անցնել, ուստի գետակի վրա անցկացված են երկու քարե կամուրջներ: Քաղաքի աջ մասում կար մի ամրոց՝ իհարկե իր լռագմական նշանակությունը կորցրած, որը, սակայն, օգտագործվում էր որպես գինամթերքի պահեստ: Այստեղ էին նաև գորանոցները: Աջ կողմում բնակվում էին գերագանցապես հայերը, իսկ ձախում՝ մահմեդականները: Կառավարական հաստատությունները տեղակայված էին աջ կողմում, իսկ ձախում՝ տարբեր առաքելություններ: Բոլոր շինությունները տաշած դեղին քարերից էին: Տները մեծ մասամբ երկհարկանի էին, սակայն հանդիպում էին նաև երեքհարկանիներ: Ձախ կողմում կար շատ հարգված մզկիթ: Բնակչությունը գերագանցապես մահմեդականներ էին, հիմնականում՝ քրդեր: Քաղաքի շինությունները չէին տուժել, իսկ հայկական մասում բոլոր փողոցները և տները լցված էին տնային իրերով, հիմնականում՝ պղնձե ամաններով:

Հայերի կողմից բախումներից խուսափելու համար գեներալ Աբացիևը մահմեդականներին տեղավորել էր ամրոցում, որտեղ նրանք ապրում էին գրեթե առանց նեղության, սակայն շատ խիտ: Մնացած բնակիչները հիմնականում կանայք, երեխաներ, ծերունիներ էին և չնչին թվով միջին և երիտասարդ տարիքի տղամարդիկ:

Երբ կորպուսի հրամանատարի մեկնելուց հետո ես այցելեցի ամրոց, ապշեցի այն ծանր պայմաններից, որոնցում մեկ ամսից ավելի գտնվում էին մահմեդականները: Նեղվածքը սարսափելի էր: Նրանք մոտեցան ինձ խոնարհվելով, իսկ ոմանք նույնիսկ փորձում էին համբուրել իմ ոտքերը: Ես ձիով էի: Խնդրում էին օգնել իրենց՝ հայտնելով, որ իրենց մոտ շատ են հիվանդները՝ թողնված առանց խնամքի և բուժումի: Նրանց թվում կային նաև տիֆով հիվանդներ: Ես խոստացա, որ անհապաղ կաշխատեմ բարելավել նրանց վիճակը:

Վերադառնալով տուն՝ ես հրամայեցի շտաբի պետին, որ պարետին կարգադրի պահակակետեր նշանակել կամուրջների մոտ՝ պարտավորեցնելով նրան ոչ որի թույլ չտալ անցնել դրանցով՝ բացի պաշտոնական անձանցից և նրանցից, ովքեր անցագրեր կունենան: Մահմեդականներին տրամադրեցի քաղաքի ձախ, իսկ հայերին՝ աջ կողմը: Հայերի կարիքները հոգում էր Քաղաքների միությունը, իսկ մահմեդականներին սպասարկելու առաջարկ արեցի Ջեմստվոնների միությանը, ինչին նրանք սիրով համաձայնեցին:

Հաջորդ օրը մահմեդականները ամրոցից տեղափոխվեցին քաղաքի իրենց հատվածը: Ջեմստվոնների միությունը անմիջապես մեկուսացրեց տիֆով հիվանդներին և անցավ նրանց բուժմանը: Իմ նկատմամբ մահմեդականների երախտագիտությունը այդ արդար վերաբերմունքի համար վերջ չունեց: Բավական

34 Բիթլիսը (Քաղեշ, Սալամոոր) մինչև ուշ միջնադար զուտ հայաբնակ քաղաք էր՝ մի քանի տասնյակ հազար բնակիչներով: 20-րդ դարի սկզբին ուներ 30 հազար բնակիչ, որոնցից մոտ 10 հազարը՝ հայեր, որոնք 1915 թ. հոկտեմբերին ենթարկվեցին բռնազաղթի և կոտորածների:

էր, որ ես հայտնվեի նրանց քաղաքամասում, որ նրանք նետվեին ինձ ընդառաջ՝ խորին շնորհակալություն հայտնելով իրենց հանդեպ իմ ցուցաբերած օգնության համար:

Կորպուսի հրամանատարից հետո Մշո դաշտով Բիթլիսից դուրս եկավ 6-րդ գնդի հրամանատար, գնդապետ Սիլիկովն իր գումարտակներից մեկի հետ և 4 լեռնային թնդանոթներով: Երկու գումարտակ ժամանակավորապես թողնվեց Բիթլիսում: Նրան [Սիլիկովին] հրամայված էր շտապ առաջանալ, քանի որ հակառակորդը Կոզմա-Գյադուկի ուղղությամբ սկսել էր ակտիվություն ցուցաբերել, և, բացի այդ, փախստականների և քրդերի մի շարք վկայություններ մատնացույց էին անում, որ թուրքերը Մուշի և Կոզմա-Գյադուկի ուղղությամբ ուղարկել են Դարդասելից նոր ժամանած 2 դիվիզիա՝ 7-րդը և 8-րդը:

Կորպուսի հրամանատարից ստացած բանավոր հրահանգի համաձայն՝ ես Բիթլիսի ջոկատին 1916 թ. ապրիլի 5-ին տվեցի № 1 հրամանը.

«1) Մեր կորպուսի ճակատում Բիթլիսի մոտ մարտի 25-ից մինչև ապրիլի 1-ը տեղի ունեցած համառ և հաղթական մարտերից հետո պարզվեց, որ թուրքերի ջանքերն ուղղված են Բիթլիսի կիրճի մուտքը գրավելուն և Մշո դաշտ դուրս գալուն, ինչի համար Բիթլիսի դեմ թուրքերը կենտրոնացրել են ողջ 5-րդ դիվիզիան, իսկ Կոզմա-Գյադուկ լեռնանցքից հարավ հայտնաբերվել են գումարտակ և մի քանի հարյուր քրդեր, Օղնուտ-Քղի շրջանում տեղակայված են 106-րդ ու 107-րդ գնդերի մնացորդները, իսկ Բաղլան-դաղի լեռնանցքից արևմուտք՝ 13-րդ գնդի գումարտակները:

2) Կորպուսի խնդիրն է հսկել և ապահովել Փաշա-փունար դաղ լեռից թուրքերի կողմից դեպի մեզ եկող բոլոր ուղիները:

3) Մեզանից աջ գտնվող գեներալ-լեյտենանտ Աբացիևի ջոկատը առաջ է մղել հետևևակը Կարգա-բազար-Բաղլու-Չանկլի-քիլիսա<sup>35</sup>-Քոզլան-գյադուկ լեռնանցք գծով և հետախուզություն է իրականացնում այդ գծի առջևում: Մուշում գեներալ Սիլիկովի ջոկատին հրամայված է համառորեն պաշտպանել Կոզմա-Գյադուկ լեռնանցքը և Մշո դաշտից Խոջերա-սու և Կծասնի մոտ գտնվող Կոմշանուկ--դաղ ու Շինիստից դեպի Նոք դուրս եկող ելքերը: Մեզանից ձախ գտնվող Վանի ջոկատը հետախուզում է Վանա լճից հարավ ընկած շրջանները:

4) Իմ հրամանատարության տակ գտնվող ջոկատին, որը կազմված է 6-րդ գնդի 2 գումարտակներից, 7-րդ և 8-րդ գնդերից, 292-րդ և 534-րդ աշխարհագորային գումարտակներից, 1-ին և 3-րդ Հայկական դրուժինաներից, Վոլգյան կազակային 3-րդ գնդի 3 հարյուրյակներից, Կովկասյան հրաձգային հրետանային 2-րդ դիվիզիոնի 2-րդ մարտկոցից, Կովկասյան հրաձգային հրետանային 4-րդ բրիգադի 3-րդ մարտկոցի 4 թնդանոթներից, Թուրքեստանյան սակրավորական 2-րդ գումարտակի 3-րդ հեռախոսային վաշտի մալուխային ջոկից, Կովկասյան առանձին սակրավորական 2-րդ վաշտի դասակից և 3-րդ բեռնակիր հեռագրական կայանից, հրամայված է.

1) Համառորեն պաշտպանել Մշո դաշտի ելքը հարավից ճակատ՝ Կարպից մինչև Վերվան ներառյալ:

---

35 Չանկլի-քիլիսա- Սբ Կարապետի թուրքական անվանումը:

2) Աստիճանաբար դուրս մղելով հակառակորդին իր զբաղեցրած դիրքերից՝ գրավել բարձունքները, որոնք ապահովում են Խանի մոտ գտնվող Բիթլիսի կիրճի մուտքը, և ամրանալ այնտեղ:

3) Հետախուզությունը կատարել դեպի արևմուտք՝ մինչև Խաշթաղի և Տափի<sup>36</sup> միջև ընկած լեռնանցքը ներառյալ, և դեպի հարավ՝ Բիթլիս-սու և Գյուզել-դերե-սու գետերի հովիտներով մինչև հակառակորդի հետ շփման մեջ մտնելը, իսկ արևելքում՝ Վերվանից մինչև Խորոս:

4) Կապ պահպանել Մուշի և Վանի ջոկատների հետ:

ա) Աջ տեղամաս՝ Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի հրամանատարին.

Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի 3 գումարտակ, 8 գնդացի

292-րդ աշխարհագրային գումարտակ 1 գումարտակ, 4 գնդացի

Վոլգյան 3-րդ կազակային գնդի 1 հարյուրյակ

Կովկասյան 2-րդ հրաձգային հրետանային դիվիզիոնի 2 թնդանոթ

Ընդամենը՝ 4 գումարտակ, 12 գնդացի, 1 հարյուրյակ և 2 լեռնային թնդանոթ:

ա) Ապահովել Բիթլիսի կիրճից ելքը դեպի Մշո դաշտ՝ զբաղեցնելով և նախապատրաստելով համառ պաշտպանության համար մի շարք հաջորդական դիրքեր Բիթլիս-Կարպ և Բիթլիս-Խան ուղղությունների միջև ընկած հատվածում՝ ներառելով և Խան-Բիթլիս (Խճուղի) ուղղությունը, և ունենալ սանդղաշարք Կարպում ջոկատի աջ թևում:

Աստիճանաբար նվաճել բարձունքները, որոնք ապահովում են մեր գերիշխող դիրքը Խանի և Քղիի միջև ընկած կիրճի տեղամասի նկատմամբ:

Հետախուզություն կատարել դեպի արևմուտք՝ մինչև Խոշտա-Թաբ հատվածում ընկած լեռնանցքը ներառյալ, և դեպի հարավ՝ մինչև հակառակորդի հետ շփումը:

բ) Չախ տեղամաս՝ Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի հրամանատարին.

Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի 3 գումարտակ, 8 գնդացի

Հայկական 3-րդ դրուժինա 1 գումարտակ

Կովկասյան 4-րդ հրաձգային հրետանային բրիգադ 4 թնդանոթ

Վոլգյան 3-րդ կազակային գնդի 1 հարյուրյակ

Ընդամենը՝ 4 գումարտակ, 8 գնդացի, 4 թնդանոթ և 1 հարյուրյակ:

գ) Ապահովել Բիթլիսի կիրճից ելքը Մշո դաշտ՝ զբաղեցնելով և նախապատրաստելով համառ պաշտպանության համար մի շարք դիրքեր Բիթլիս-Վերվան և Բիթլիս-Խան ուղղությունների միջև ընկած հատվածում և ունենալ սանդղաշարք Վերվանի ջոկատի ձախ թևում:

Աստիճանաբար գրավել Եզնով գյուղից հարավ գտնվող ձևե բարձունքը: Հետախուզություն կատարել Գյուզել-դերե-սու [գետի] հովտով մինչև հակառակորդի հետ շփումը՝ Վերվանից արևելք մինչև Խորասան:

գ) Ընդհանուր պահեստագործ փոխգնդապետ Պլատոնով.

Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 2 գումարտակ, 4 գնդացի

Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի 1 գումարտակ

36 Խուրթի նշանավոր բնակավայրերից, միջնադարում գյուղաքաղաք:

Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի	1 գումարտակ
534-րդ աշխարհագորային դրուժինա	1 գումարտակ
Հայկական 1-ին դրուժինա	1 գումարտակ
Կովկասյան 2-րդ հրետանային դիվիզիոնի	4 թնդանոթ
Վոլգյան 3-րդ կազակային գնդի	1 հարյուրյակ
Կովկասյան 2-րդ առանձին սակրավորական վաշտի	¼ վաշտ:
Ընդամենը՝ 6 գումարտակ, 8 գնդացի, 4 թնդանոթ, 1 հարյուրյակ, ¼ վաշտ:	

5) 9-րդ բեռնակիր հեռագրական կայանին և Թուրքեստանյան սակրավորական վաշտի մալուխային ջոկին՝ կապ հաստատել ջոկատի շտաբի պետ, գնդապետ Պոլտավցևի ցուցումով:

6) Հրետանային շարժապահեստները տեղակայել ջոկատի հրետանու պետ, գնդապետ Շաումանի ցուցումով: Բիթլիսի պահեստից ստանալ արկեր և փամփուշտներ:

7) Սանիտարական հաստատությունները տեղակայել ջոկատի բժիշկ, կուլեգիալ խորհրդական Պանկևիչի ցուցումով: Մոտակա լազարեթը Բիթլիսում է: Մարտի դեպքում, ջոկատի բժշկի կարգադրությամբ, վիրակապման ջոկատին՝ վիրակապման կետ բացել Բիթլիսի հարավային արվարձանի խճուղու մոտ:

8) 2-րդ կարգի գումակը<sup>37</sup> տեղակայել Բիթլիսում մինչև հատուկ կարգադրությունը: Դրանց՝ այլ վայր տեղափոխվելու դեպքում բոլոր զորամասերի գումակի պետը, 7-րդ գնդի տնտեսական մասի պետը պետք է միշտ տեղյակ լինեն, թե Բիթլիսի որ մասում են գտնվում զորամասերի գումակները:

9) Ես լինելու եմ Բիթլիսում:

10) Շտապ գեկույցներն ուղարկել առավոտյան ժամը 8-ին, ցերեկվա ժամը 2-ին և երեկոյան ժամը 6-ին:

11) Տեղամասերի պետերը պետք է միմյանց հետ փոխանակեն գեկույցները և հրամանները:

12) Ապրիլի 12-ին ինձ ներկայացնել տեղամասերում զորքերի տեղակայման սխեման, դիրքերի և ամրությունների սխեման, կապի սխեման և տեղամասերին տրված հրամանները:

13) Ուշադրություն դարձնել տեղամասերի միջև կապի, գլխավորապես հեռախոսային, հաստատմանը, ինչը չափազանց կարևոր է ջոկատի զբաղեցրած կտրտված տեղանքում:

14) Տեղակալներն են գնդապետ Օբրագցովը և գնդապետ Պոլտավցևը:

15) Համաձայն այս հրամանի՝ զորքերի բաշխումը կատարել աստիճանաբար՝ հատուկ ցուցումներով:

Բնօրինակը ստորագրել է ջոկատի հրամանատար, գեներալ-մայոր Նազարբեկովը:

Հաստատել է շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար, գնդապետ Պոլտավցևը:

37 Ձինփորական գումակները բաժանվում էին 2 մասի՝ 1-ին և 2-րդ: Առաջինը շարժվում էր զորքի հետ միասին, իսկ երկրորդը գտնվում էր առաջնագծից 7-8 վերստի վրա:

Ուղարկվել է 1916 թ. ապրիլի 6-ին՝ առավոտյան ժամը 11-ին»:

Ապրիլի 6-ին ես շտաբի պետի և սակրավոր սպայի հետ դուրս եկա: Մենք դիտեցինք հակառակորդի կողմն ընկած տեղանքը, նշեցինք մի քանի դիրքեր, ընդ որում, ես հրամայեցի անմիջապես անցնել նշված դիրքերի ամրացմանը: Այդ աշխատանքում ներգրավվեցին իմ պահեստագործի զորամասերը և աշխատունակ բնակիչները:

4-րդ կորպուսի բոլոր ջոկատներում սրվել էր պարենի խնդիրը: Մատակարարումը, ցավոք սրտի, դեռևս ընդհատումներով էր կատարվում: Չգիտես ինչու, մատակարարումը դեռևս կանոնավոր չէր: Կարելի է ենթադրել, որ կար բեռնակիր կենդանիների պակաս: Չգիտես ինչու, տրանսպորտները Բիթլիս էին գալիս շրջանցիկ ձանապարհով՝ Խնուսից դեպի Մուշ և Մշո դաշտ, ինչի հետևանքով իզուր զգալի ժամանակ և ուժեր էին ծախսվում: Այդ իսկ պատճառով ես խնդրեցի՝ հնարավոր չէ արդյոք դրանք ուղարկել Մանազկերտից դեպի Կարմունջ<sup>38</sup>, Դատվան, ինչպես նաև, եթե հնարավոր է, կազմակերպել մատակարարում Վանից նավերով Դատվան:

Դեռևս Բիթլիսում կար թուրքերից խլված այլուրի աննշան պաշար, որը տրվում էր ծայրահեղ դեպքում աննշան չափով: Ցավոք, զգացվում էր նաև օրապարենի համար նախատեսված անատունների պակաս. չնայած նրան, որ դրանք շատ էին մարտին, բայց սատկել էին կերի պակասից և անդադար անցումներից:

Անասնակերի հարցն ավելի սուր էր: Անասնակեր բացարձակապես չկար՝ ինչպես չոր խոտ և գարի, այնպես էլ դարման: Ձիերը կերի պակասից սարսափելիորեն հյուծվել էին: Արոտավայրային խոտը սկսել էր երևալ միայն ցածրադիր վայրերում, այն էլ՝ աննշան քանակությամբ: Բիթլիսը շրջապատող լեռները դեռևս ծածկված էին ձյան բավականաչափ զգալի շերտով: Բժավոր տիֆը Բիթլիսում սկսել էր սրվել: Կային շատ հիվանդներ, ինչպես սպաների, այնպես էլ զինվորների, բնակիչների և փախստականների շրջանում: Դժվար էր պայքարել հիվանդության դեմ, քանի որ, սկսած 1915 թ. դեկտեմբերից, զորամասերը գրեթե չէին ունեցել սպիտակեղենի փոխնորդ և անընդմեջ եղել էին արշավներում, կռիվներում կամ դիրքերում, ուստի հնարավորություն չէին ունեցել բաղնիք սարքել և լողանալ: Բիթլիսում ողջ քաղաքի համար միայն մեկ բաղնիք կար<sup>39</sup>: Ուստի զարմանալի չէ, որ մարդկանց վրա կային մեծ քանակությամբ մակաբույծներ: Դիվիզիոնի բժշկի կողմից կտրուկ միջոցներ էին ձեռնարկվել բժավոր տիֆի դեմ պայքարում: Դատվանում կառուցվել էր երկու լազարեթ, որոնցից մեկը՝ տիֆով հիվանդների համար: Քիչ չէին զոհերը այդ լազարեթի բժշկական անձնակազմում, որը եռանդով ձեռնամուխ էր եղել օգնելու տառապողներին:

Բիթլիսի ամրոցում կար վառողի մեծ պահեստ, իսկ քաղաքի հայկական թաղամասում՝ պղնձյա ամանեղեն, ռազմահանգրվանի պարետի շենքում կար անհայտ անձանց պատկանող գյուղատնտեսական մեքենաների մեծ պահեստ: Ես դիմեցի կորպուսի հրամանատարին, թե ինչպես վարվեմ դրանց հետ՝ ավելացնելով,

38 Խլաթի Կարմունջ հայաբնակ գյուղը:

39 Թուրք-քրդական տիրապետության հետևանքով քաղաքը զրկվել էր մոտ 600 հասարակական և տնային բաղնիքներից: Նվաճողների համար բաղնիք հասկացողությունը երկար ժամանակ գոյություն չուներ:

որ ահռելի քանակությամբ վառողի առկայությունը վտանգավոր է: Հրաման ստացա վառողը և պղնձե ամանեղենն ուղարկել Դատվան, այնտեղից էլ նավերով՝ Վան, իսկ գյուղատնտեսական մեքենաները վերադարձող տրանսպորտով՝ Ղարաքիլիսա: Այս կարգադրությունը, իհարկե, կատարվում էր աստիճանաբար: Առաջին հերթին, ձեռնարկելով բոլոր նախագուշակյան միջոցները, ուղարկեցի վառողը:

Գյուղատնտեսական մեքենաներն ուղարկելուց որոշ ժամանակ անց հայտնվեցին դրանց հայ տերերը: Նրանց փաստաթղթերը ստուգելուց և բնակիչներին հարցուփորձ անելուց հետո իսկապես հաստատվեց այն փաստը, որ մեքենաները նրանց են պատկանել: Ես շատ էի ցավում, որ նրանք ուշացել են իրենց դիմումներով, և նրանց ուղարկեցի Ղարաքիլիսա: Գյուղատնտեսական մեքենաները շատ էին: Ինձ զարմացրեց նաև դրանց առատությունը: Դրանք գերմանական արտադրության էին:

Տեղանքին ծանոթանալիս, որտեղ Բիթլիսի ջոկատի վերջին դիրքն էր եղել, և որտեղ, այսպես ասած, վճռվել էր ջոկատի ճակատագիրը, ինչպես նաև մասնակիցների հարցուփորձից և ջոկատի հրամանատարի զեկույցից ես համոզվեցի, թե ինչպիսի ջանքեր և անձնագոհություն էին պահանջվել Բիթլիսի ջոկատից՝ կասեցնելու թուրքական լավագույն 5-րդ դիվիզիայի հարձակումը, որը անգլիացիների և ֆրանսիացիների կողմից Գալիպոլիի պաշարման ժամանակ ցուցաբերած քաջության համար փառիշտաբար կողմից պարգևատրվել էր հատուկ ժապավենիկներով, որոնք սպաններն ու զինվորները կրում էին իրենց կոճականցքերում:

Հատկապես քաջաբար է պաշտպանել Բիթլիս քաղաքից հարավ-արևելք գտնվող լեռնագանգվածը փոխգնդապետ Եգուպովն իր գումարտակով՝ բազմիցս ետ մղելով թուրքերի կատաղի հարձակումները, որոնք ձգտում էին տիրելու այդ լեռնագանգվածին, որը մեր դիրքերի գլխավոր բանալին էր: Այդ լեռնագանգվածն իր համառ դիմադրության համար ստացել էր «Եգուպովյան» անվանումը: Դիտումից և հարցուփորձից հետո ես Բիթլիսի ջոկատին տվեցի հետևյալ հրամանը.

«Հրաման Բիթլիսի ջոկատին, N 2, 8 ապրիլի 1916 թ»:

Բիթլիսի ջոկատին վիճակվել էր բացառիկ բարդ առաջադրանք, որը նա փայլուն կերպով կատարել է: Բիթլիսի նախկին ջոկատը գնդապետ Օբրագցովի հրամանատարությամբ մարտի 25-31-ը ենթարկվել էր հակառակորդի գերազանցող ուժերի ցերեկային ու գիշերային անընդհատ և համառ գրոհներին, որոնց հետևանքով ջոկատն օղակվել էր, ընդ որում, հակառակորդը, այնուամենայնիվ, հնարավորություն ուներ փոխելու մարտը վարող զինվորներին, իսկ Բիթլիսի ջոկատի զորամասերը գրեթե առանց հերթափոխի կատարում էին ծառայությունը դիրքերում անձրևի ու ձյան տակ՝ առաջանալով անհավանական բարդ տեղանքով բացարձակապես անպետք կոշիկներով, դիմանալով ցրտին և սովին, մեկ շաբաթվա ընթացքում չունենալով ո՛չ քուն, ո՛չ էլ հանգիստ: Զորքերի և հրամանատարական կազմի, հատկապես ջոկատի հրամանատար, գնդապետ Օբրագցովի բարձր ոգին թույլ տվեց Բիթլիսի ջոկատին ետ մղել հակառակորդի հուսահատ հարձակումները մինչև Մուշի նախկին ջոկատի զինվորների հասնելը, և երբ վերջիններս, առանց պարենի և կոշիկի, անսպառ եռանդով անցնելով գրեթե առանց ճանա-



պարհների, մեծաթիվ քրդերով շրջապատված լեռներով, մոտեցան ու հարվածեցին հակառակորդի ձախ թևին, Բիթլիսի ջոկատի զինվորներն իրենց մեծ ուժ գտան հարձակման անցնելու և համատեղ ուժերով ետ շարտեցին հակառակորդին՝ պատճառելով նրան զգալի կորուստներ և գերեվարելով մի քանի հարյուր հոգու:

Երջանիկ եմ, որ կարող եմ վկայել ինձ վստահված ջոկատի զորամասերի բարձր ռազմական ոգին, որը հնարավորություն տվեց պարտության մատնելու հակառակորդին մեզ համար ամենաանբարենպաստ պայմաններում և ցույց տալու, որ ինձ վստահված փառապանձ զորքերի համար գոյություն չունի ոչ մի դժվարություն, և որ նրանք մշտապես ջախջախում են հակառակորդին:

Պարտքս եմ համարում շնորհակալություն հայտնել Բիթլիսի ջոկատի նախկին հրամանատար, գնդապետ Օբրագցովին, որի հրամանատարությամբ Բիթլիսի ջոկատի զորքերը ցուցաբերեցին այդչափ աննկուն վճռականություն և տոկունություն, շտաբի պետի մտերիմ օգնական, Գլխավոր շտաբի կապիտան Գոտովցևին և Մուշի ջոկատի նախկին հրամանատար, գնդապետ Կրեմենցկուն: Ի սրտե շնորհակալություն եմ հայտնում Բիթլիսի և Մուշի նախկին ջոկատների պարոնայք սպաներին, որոնք զինվորներին ներշնչեցին իրենց եռանդը և պարտքի կատարման բարձր պատասխանատվությամբ՝ վճռականություն և ուժ: Հերոս շարքայինների խորին շնորհակալություն՝ հանուն ցարի և Հայրենիքի իրենց քաջարի ծառայության համար: Այս հրամանը կարդալ բոլոր վաշտերում, հարյուրյակներում, մարտկոցներում և ստորաբաժանումներում:

Բիթլիսի ջոկատի հրամանատար, գեներալ-մայոր Նազարբեկով»:

Ֆոնա Իվանի Նազարբեկով [ստորագրություն]  
ՀԱԱ, Ֆ. 45, ց. 1, գ. 12, թ. 1-37: Բնագիր: Ձեռագիր:

## Վ Ե Ր Ջ

**Ռուբեն Օ. Սահակյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաձևակառուցում, կամավորական շարժմանը, Հայոց ցեղասպանությանը առնչվող հիմնահարցերը, նույն շրջանի ինքնապաշտպանական մարտերի, ինչպես նաև հայկական ոստիկանության պատմությունը:

Էլ. հասցե՝ rubensahakian@mail.ru

## Summary

### **THE UNPUBLISHED MEMORIES OF TOVMAS NAZARBEKYAN**

Military operations on the Caucasus Front from  
July 1914 to April 26, 1916.

Notebook 11: from March 13 to April 2.

Ruben O. Sahakyan

*Doctor of Sciences in History*

**Key words** – Tovmas Nazarbekyan, Bitlis, Mush, Genj, M. Silikyan, Colonel Obratzov, acrophobia.

We consider the publication of the 11th notebook of Tovmas Nazarbekyan's memoirs to be the completion of the printing of a valuable memoir work presenting the military operations on the Caucasus Front of the First World War from July 1914 to April 1916. The section covering the general's memoirs from November 1917 to July 1918 was in its time published in Russian original text in the magazine "Bulletin of Armenian Archives" (1992, N 3, pp. 34-153), edited by Academician Hrant Avetisyan. Therefore, only the part covering from April 1916 to November 1917 remained unpublished, which we did not manage to find in the National Archives of Armenia.

The 11th notebook of General T. Nazarbekyan mainly mentions the hostilities on the Caucasus Front in March 1916, when the 2nd Rifle Division led by him had serious clashes with the Turkish 5th Infantry Division and Kurdish armed formations moved from Western Gallipoli to Western Armenia. The commander states with regret that the commander of the 4th Army Corps, General V. de Witt did not take into account the specifics of the mountainous terrain, the low combat readiness of the reservists, the insecurity of the rear and the almost lack of supply in planning these operations. Meanwhile, starting from mid-March 1916, the enemy had concentrated all its forces in the direction of Bitlis, aiming to capture the city.

After analyzing the received reports, General T. Nazarbekyan asked the commander of the 4th Army Corps to send him to the 5th and 6th Rifle Regiments in the reserve, but he did not receive any response. Meanwhile, the intelligence was alerting that the enemy was continuing to accumulate additional forces, especially the Kurds acted actively. By the order of the general, punitive actions were

organized against the latter, but they did not give any significant results. After the Russians left, the Kurds each time resumed their attacks.

Therefore, General T. Nazarbekyan again appealed to the corps commander for help, but was clearly refused. After some time, it turned out that V. de Witt wanted to encircle the Turkish-Kurdish forces in the Bitlis region, thereby he did not send reinforcements and pushed the enemy to continue advancing, not realizing that in such a case he posed a serious threat to the forces defending Bitlis. But the corps commander did not even inform T. Nazarbekyan of his dubious idea.

In the current situation, T. Nazarbekyan had to send his last reserve force, three rifle battalions, to Bitlis for help, weakening Mush's defense. Fortunately, all the enemy's attention was focused on Bitlis and he did not take any action to retake Mush. The battalions sent by the general were decisive and the Turkish-Kurdish forces were defeated and thrown back to the starting positions.

The Armenian translation of General Tovmas Nazarbekyan's memoirs is being published for the first time without reductions. Our interventions are presented in straight brackets. The original is preserved in the National Archives of Armenia.

Резюме

## **НЕИЗДАННЫЕ ВОСПОМИНАНИЯ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА**

Военные действия на Кавказском фронте

с июля 1914 г. по 26 апреля 1916 г.

Тетрадь N 11: с 13 марта по 2 апреля 1916 г.

**Рубен О. Саакян**

*Доктор ист. наук*

**Ключевые слова** - Товмас Назарбекян, Битлис, Муш, Гендж, М. Силикян, полковник Образцов, акрофобия.

Публикацией 11-ой тетради мемуаров генерала Товмаса Назарбекяна мы считаем завершенным издание ценного мемуарного труда генерала, описывающего военные действия на Кавказском фронте во время Первой мировой войны за период с июля 1914 г. по апрель 1916 г. Последняя часть воспоминаний генерала о времени с ноября 1917 г. по июль 1918 г. была

издана раньше на русском языке академиком Грантом Аветисяном в журнале «Вестник архивов Армении» (ВАА, 1992, № 3, с. 34-153). Таким образом, неизданными остаются только воспоминания, охватывающие период с апреля 1916 г. по ноябрь 1917 г., которые нам так и не удалось найти в Национальном архиве Армении.

В 11-ой тетради воспоминаний генерала Назарбекияна в основном представлены боевые действия на Кавказском фронте в марте 1916 г., когда возглавляемая им 2-ая стрелковая дивизия столкнулась с 5-ой турецкой дивизией переброшенной из района Галиполи в Западную Армению и курдскими вооруженными формированиями. Полководец с болью сообщает, что командующий 4-ым армейским корпусом генерал В. де Витт при планировании этих действий не принял во внимание особенности ландшафта горной местности, плохую боевую подготовленность резерва, слабая защищенность тыла и почти полное отсутствие снабжения войск. В то же время начиная с середины марта 1916 г. противник сосредоточил все свои силы в направлении Битлиса, поставив перед собой цель – завоевать город.

Предварительно проанализировав полученные докладные, Т. Назарбекиян обратился к командующему 4-ым армейским корпусом с просьбой отправить ему в помощь находящиеся в резерве 5-ый и 6-ой стрелковые полки, однако не получил ответа. В то же время разведка забила тревогу, что враг продолжает стягивать дополнительные силы, особенно активно действуют курды. По приказу генерала против последних были проведены карательные операции, однако они какого-либо существенного результата не принесли. Каждый раз после ухода русских курды возобновляли нападения.

Поэтому генерал Назарбекиян вновь обратился к командующему корпусом с просьбой о помощи, однако получил категорический отказ. По истечению времени выяснилось, что В. де Витт планировал взять турецко-курдские войска в окружение в районе Битлиса, и поэтому не отправлял пополнение. Тем самым он побуждал противника продвигаться вперед, не понимая, что в подобном случае подвергает опасности защищающие Битлис силы. Однако командующий корпусом даже не поставил в известность Т. Назарбекияна об этом сомнительном плане.

В создавшейся ситуации Т. Назарбекиян был вынужден отправить на помощь Битлису свой последний резервный полк – три стрелковых батальона, чем ослаблял защиту Муша. К счастью, все внимание противника было сосредоточено на Битлисе, и он не предпринял никаких действий для того, чтобы отвоевать Муш. Действия отправленных генералом батальонов сыграли решающую роль в битве. В результате турецко-курдские силы были разбиты и отброшены на исходные позиции.

Армянский перевод воспоминаний генерала Товмаса Назарбекяна публикуется впервые и без сокращений. Наш комментарий представлен в вертикальных скобках. Оригинал мемуаров хранится в Национальном архиве Армении.

ԱՐՄԵՆԻԱ

## REFERENCES

1. Armjanskij korpus protiv tureckix vojsk (nojabr' 1917 g.-ijul' 1918 g.). Vospominanija generala F. I. Nazarbekova. Sostavitel': G. M. Shatirjan, specialist Arxivnogo Upravlenija, redaktor: **G. A. Avetisjan**, chlen-korrespondent AN RA, professor, VAA, N 3, 1992 (**In Russian**).
2. HAA, f. 45, ts'. 1, g. 23, t'. 26 (**In Armenian**).
3. HAA, f. 45, ts'. 1, g. 23, t'. 34 (**In Armenian**).
4. HAA, f. 45, ts'. 1, g. 23, t'. 47 (**In Armenian**).
5. HAA, f. 45, ts'. 1, g. 23, t'. 49 (**In Armenian**).
6. HAA, f. 45, ts'. 1, g. 28, t'. 9-10 (**In Armenian**).
7. **Maslovskij Je. V.**, Mirovaja vojna na Kavkazskom fronte 1914-1917 gg. Strategicheskij ocherk, Parizh, 1933 (**In Russian**).
8. **Sahakyan R. O.**, Karo Sasunu zekuts'agererë Taroni hayut'yan vichaki masin, "Vēm", Yer., 2010, N 2 (**In Armenian**).

Վէճ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) Գրայրի, Թիվ 3(75), հուլիս-սեպտեմբեր, 2021